



«ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՍՏԱՎԱԾ Ե՝

ՀԱՅՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թ. 1

«28» սեպտեմբերի 2023 թ.

ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ՝

ՈԵԿՏՈՐ Վ. ՌԵՎՈՆԻ

« »



ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մասնագիտություն՝ 071804.00.6 Ագրարային ճարտարագիտություն

Կրթական ծրագիր՝ 071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն

Որակավորում՝ ճարտարագիտության բակալավր

Երևան 2023

Բովանդակություն

	Ծրագրի ընդհանուր բնութագիրը	
	Ծրագրի նպատակը	
	Ծրագրի տարբերակիչ առանձնահատկությունները և մրցակցային առավելությունները	
	Շրջանավարտի ընդհանրական կոմպետենցիաները	
	Շրջանավարտի մասնագիտական կոմպետենցիաները	
	Ծրագրի կառուցվածքը	
	Դասավանդման և ուսումնառության մեթոդները	
	Գնահատման մեթոդները	
	Կրթական ծրագրի շրջանակներում իրականացվող պրակտիկան	
	Մասնագիտական գործունեության ոլորտը և ապագա կարիերայի հնարավորությունները	
	ՄԿԾ իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներ	
	ՄԿԾ իրականացման համար պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմին ներկայացվող պահանջներ	
	Հավելվածներ	
	Հավելված 1. Մասնագիտության կրթական ծրագրի ուսումնական պլան	
	Հավելված 2. Մասնագիտության կրթական ծրագրի բաղադրիչների և շրջանավարտի կոմպետենցիաների համապատասխանության կառուցվածքային մատրից	
	Հավելված 3. Բենչմարքինգ (ՄԿԾ-ի համահունչությունը նմանատիպ այլ ճանաչված ՄԿԾ-ների հետ)	
	Հավելված 4. Աշխատանքային կիսամյակի պրակտիկայի ծրագիր	
	Հավելված 5. Պրակտիկայի գնահատման թերթիկ	

1. Ծրագրի ընդհանուր բնութագիրը

Ֆակուլտետ	Ագրարային ճարտարագիտության
Ամբիոն	Զրային և հողային ռեսուրսների կառավարման
Ոլորտ / Միջոլորտային բնագավառ	
Մասնագիտության (մասնագիտացման) անվանումը և դասիչը	071804.00.6 Ագրարային ճարտարագիտություն
Մասնագիտության կրթական ծրագիր	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
ՄԿԾ պատասխանատու/-ներ	Եղիազարյան Գուրգեն Մարկոսի, գ. գ.

		դ.,պրոֆ. Ալյան Նահիա Գրիգորի, տ. գ. թ., դոցենտ
Ուսուցման ձևը (առկա, հեռակա, հեռավար)		Առկա, հեռակա
Շնորհվող որակավորումը (բակալավր, մագիստրոս)		Ճարտարագիտության բակալավր
Ուսուցման լեզուն		հայերեն
Ծրագրի մուտքի ընդհանուր պահանջներ		Միջնակարգ կրթություն, միջին մասնագիտական կրթություն
Ուսուցման ընդհանուր տևողություն/ կրեդիտ	առկա 4 տարի	հեռակա 4,8 տարի 240 կրեդիտ
Որից՝ Հսարանային ուսուցում (ա.թ.՝ տեսական, գործնական, լաբորատոր)	3274 ժամ, 108 շաբաթ	828 ժամ, 27 շաբաթ
Ինքնուրույն աշխատանք	2796 ժամ	5178 ժամ
Քննաշրջան	21 շաբաթ	36 շաբաթ
Պրակտիկա	7-րդ կիսամյակ 16 շաբաթ	9-րդ կիսամյակ 3 շաբաթ
		աշխատանքային կիսամյակ (արտադրական պրակտիկա), 30 կրեդիտ
Ամփոփիչ ատեսավորում		Ավարտական աշխատանքի պաշտպանություն, 4 շաբաթ, 10 կրեդիտ
Արձակուրդ	46 շաբաթ	177 շաբաթ

2. Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակն է հողային և ջրային ռեսուրսների արդյուանվետ օգտագործման և կառավարման ոլորտում, պատրաստել մրցունակ, համապարփակ հմտություններով և կարողություններով ճարտարագետներ, որոնք կկարողանան նախագծել, կառուցել և շահագործել մակերեսային և ստորերկրյա ջրային հոսքերի կարգավորման (ջրամբարային հիդրոհանգույցներ), ոռոգման և կոլեկտորադրենաժային համակարգեր, մշակեն նորագոյն տեխնոլոգիաների կիրառմամբ հակառողիոն և խախտված հողերի վերականգնման միջոցառումներ, աղուտ-ալկալի հողերի մելիորացիայի, դրենաժային ցանցի, գյուղատնտեսական ջրամատակարարման և ջրարբիացման, պոմպային կայանների իրականացման աշխատանքներ, թվային տեխնոլոգիաների իմացությամբ հողերի հաշվառման, չափագրման և անշարժ գույքի գնահատման բնագավառներում կատարեն հողաշինարարական, գեոդեզիական և կադաստրային աշխատանքներ, իրականացնեն հողային և ջրային պաշարների մոնիթորինգ:

3. Ծրագրի տարբերակիչ առանձնահատկությունները և մրցակցային

առավելությունները

Հայաստանի ջրային և հողային պաշարները խիստ սահմանափակ են և դրանց արդյունավետ օգտագործմանն ուղղված տեխնոլոգիական միջոցառումների իրականացումն արդիական է և բխում է Հանրապետության ազրոպարենային ոլորտի կայուն զարգացման ռազմավարությունից: Այս մասնագիտությամբ տեսական և գործնական գիտելիքներ ստացած ուսանողները հնարավորություն կունենան այն կիրառել հողերի հաշվառման, անշարժ գույքի չափագրման, գնահատման, հողաշինարարության, ԶՕԸ-ում ներտնտեսային ջրօգտագործման կազմակերպման, հիդրոմելիորատիվ տարբեր կառուցվածքների և ոռոգման համակարգերի նախագծման, կառուցման և շահագործման ոլորտներում: Ծրագրի մրցակցային առավելություններից են գյուղատնտեսական նպատակներով հողօգտագործման և ջրօգտագործման կառավարման ոլորտում մասնագիտական հնարավորությունները, միջազգային համագործակցության առկա և հեռանկարային ծրագրերը, հողերի բերրիության և բերքատվության կայուն բարձրացման առկա մարտահրավերները: Դրանով ապահովվում է ծրագրի շարունակականությունը:

4. Շրջանավարտի ընդհանրական կոմպետենցիաներ (ԸԿ)

Ակնկալվում է, որ ՄԿԾ հաջող ավարտին ուսանողը կկարողանա.

- ԸԿ1. քննադատորեն վերլուծել հասարակական գործընթացներին վերաբերվող տեղեկատվությունը,
- ԸԿ2. բանավիճել՝ պահպանելով փաստարկման էթիկայի կանոնները,
- ԸԿ3. օգտագործել ստացած տնտեսագիտական գիտելիքները մասնագիտական ոլորտում անհրաժեշտ գործունեություն իրականացնելու համար,
- ԸԿ4. հաղորդակցվել՝ գրավոր և բանավոր, փոխհամագործության պայմաններում լուծելու համար մասնագիտական խնդիրները,
- ԸԿ5. կիրառել տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական գործունեության մեջ,
- ԸԿ6. աշխատել թիմով, արդյունավետ շփվել գործընկերների, ղեկավարության և սպառողների հետ,
- ԸԿ7. օգտագործել իրավաբանական գիտելիքները գործունեության տարբեր բնագավառներում կողմնորոշվելու համար,
- ԸԿ8. օգտագործել գիտելիքները առաջին օգնության, արտակարգ իրավիճակներում արագ կողմնորոշվելու համար:

5. ՄԿԾ շրջանավարտի մասնագիտական կոմպետենցիաներ (ՄԿ)

- ՄԿ1. Կնախագծի ջրամբարային հիդրոհանգույցի կառուցվածքները, ոռոգման համակարգը:
- ՄԿ2. Կկազմի հողաշինարարական սխեմաներ, միջտնտեսային և ներտնտեսային հողաշինարարական նախագծեր:
- ՄԿ3 Կտիրապետի ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներին և գեոդեզիական

գործիքներին՝ ճարտարագիտական նախագծերը բնության մեջ տեղափոխելու համար:

- ՄԿ4** Կվերլուծի ջրային և հողային պաշարների կառավարման, պահպանման և օգտագործմանը միտված համալիր ծրագրեր, հաշվի առնելով բնապահպանական սկզբունքները և պահանջները:
- ՄԿ5.** Կիրառի առկա տեխնիկական, իրավական, նորմատիվային փաստաթղթերի բովանդակությունը և արդի թվային տեխնոլոգիաները հողային և ջրային պաշարների օգտագործման կանխատեսման, ճարտարագիտական նախագծերի մշակման և անշարժ գույքի կադաստրի վարման ոլորտում:
- ՄԿ6.** Կկազմի ագրարային ճարտարագիտական նախագծերի նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:
- ՄԿ7.** Կիրականացնի հողային և ջրային պաշարների մոնիթորինգ արդի թվային տեխնոլոգիաների կիրառմամբ:
- ՄԿ8.** Կիրականացնի խորհրդատվություն ջրատնտեսական և հողաշինարարական համակարգերի, հիդրոտեխնիկական կառուցվածքների նախագծման, բնապահպանության ոլորտում նորմատիվ, տեխնիկական, իրավական փաստաթղթերի բովանդակության վերաբերյալ:
- ՄԿ9.** Կկատարի ջրատնտեսական և հողաշինարարական ծրագրերի փորձաքննություն և գնահատում:

ՄԿԾ Վերջնարդյունքներ՝ ըստ կոմպետենցիաների խմբերի

ՄԿ 1 Վերջնարդյունքներ

1.1	Ներկայացնել ջրամբարային հիդրոհանգույցի կառուցվածքները և դրանց նշանակությունը:
1.2	Կազմել ոռոգման համակարգի սխեման:
1.3	Կատարել ջրթող և ջրհեռ կառուցվալքների հիդրավլիկական հաշվարկ:
1.4	Հաշվել ոռոգման ջրանցքների ջրի ծախսերը և շինարարական չափերը:

ՄԿ 2 Վերջնարդյունքներ

2.1	Կազմել միջտնտեսային և ներտնտեսային հողաշինարարական սխեմա:
2.2	Նկարագերել սահմանազատման և սահմանագծման հողաշինարարական աշխատանքների, վարչական սահմանների նկարագրման, փոփոխության, ամրացման աշխատանքների բովանդակությունը:
2.3	Բացատրել հողօգտագործման արդյունավետության բարձրացման միջոցառումները ներտնտեսային հողաշինարարության պայմաններում:
2.4	Կատարել հողային ֆոնդի հաշվառում, հողերի փոխակերպում, հողերի մոնիթորինգի արդյունքների վերլուծություն և հողօգտագործման կարգավորում:

ՄԿ 3 Վերջնարդյունքներ

3.1	Ներկայացնել GIS տեխնոլոգիաներ և GPS բովանդակությունը:
3.2	Կիրառել գեոդեզիկան գործիքները նախագիծը բնության մեջ տեղափոխելու համար:

3.3	Կիրառել արբանյակային նկարները, դրոնների և այլ աէրոլուսանկարահանումները ճարտարագիտական նախագծերում
3.4	Կատարել GPS համակարգով աշխատող գեոդեզիական գործիքներով նախագծի տեղափոխում բնության մեջ:

ՄԿ 4 Վերջնարդյունքներ

4.1	Բացատրել ջրային և հողային պաշարների կառավարման ծրագրերի բովանդակությունը:
4.2	Կատարել ջրային և հողային պաշարների հաշվառում և վերլուծություն:
4.3	Մշակել բնապահպանական խնդիրների, սկզբունքների և պահանջների բովանդակությունը ջրային և հողային պաշարների կառավարման ծրագրերում:

ՄԿ 5 Վերջնարդյունքներ

5.1	Կատարել ArcGIS միջավայրում ջրային պաշարների թվային արտեզագրում:
5.2	Կազմի ArcGIS միջավայրում հողօգտագործման գոտիավորման սխեմա:
5.3	Իրականացնել ջրային տնտեսության և հողաշինարարության ոլորտներում կիրառվող նորմատիվային փաստաթղթերի կարգավորումներներ, անշարժ գույքի հաշվառում և գնահատում:
5.4	Կիրառել թվային տեխնոլոգիաները և տեխնիկական, իրավական, նորմատիվային փաստաթղթերը հողարարելավման, հողօգտագործման կազմակերպման և կարգավորման նախագծերում:

ՄԿ 6 Վերջնարդյունքներ

6.1	Հաշվարկել նախագծվող օբյեկտի շինարարական աշխատանքների ծավալները:
6.2	Կազմել առանձին շինարարական օբյեկտների նախահաշիվներ:
6.3	Մշակել ճարտարագիտական նախագծի ամփոփիչ ֆինանսական նախահաշիվը:
6.4	Ներկայացնել նախագծանախահաշվային փաստաթղթերի հաստատման և այնուհետև իրականացման ընթացակարգը:

ՄԿ 7 Վերջնարդյունքներ

7.1	Բնութագրել ջրային և հողային ռեսուրսների մոնիթորինգի ցուցանիշները:
7.2	Իրականացնել հողային և ջրային ռեսուրսների կադաստր:
7.3	Կատարել ջրային ռեսուրսների մոնիթորինգ թվային տեխնոլոգիաների կիրառմամբ:
7.4	Մշակել հողային և ջրային ռեսուրսների մոնիթորինգի արդյունքները:

ՄԿ 8 Վերջնարդյունքներ

8.1	Մշակել ջրատնտեսական և հողաշինարարական համակարգերի իրականացման արդյունավետ տարրերակ:
8.2	Կատարել հիդրոտեխնիկական կառուցվածքների շահագործման պայմանների փորձաքննություն և խորհրդատվություն:
8.3	Գնահատել ջրատնտեսական և հողաշինարարական կառուցվածքների նախագծային ցուցանիշների համապատասխանությունը բնապահպանական պահանջներին:

ՄԿ 9 Վերջնարդունքներ

9.1	Իրականացնել ջրատնտեսկան ծրագրերի փորձաքննություն:
9.2	Բացահայտել հողաշինարարական ծրագրերի շեղումը նախագծային ցուցանիշներից:
9.3	Գնահատել ջրատնտեսական և հողաշինարարական ծրագրերի սոցիալ-տնտեսական և բնապահպանական ազդեցությունը:

6. Ծրագրի կառուցվածքը

6.1. Ուսումնական պլան (**Հավելված 1**)

6.2. Մասնագիտության կրթական ծրագրի բաղադրիչների և շրջանավարտի կոմպետենցիաների համապատասխանության կառուցվածքային մատրից (**Հավելված 2**)

6.3. Բենչմարքինգ (ՄԿԾ-ի համահունչությունը նմանատիպ այլ ճանաչված ՄԿԾ-ների հետ (**Հավելված 3**)

6.4. Աշխատանքային կիսամյակի (պրակտիկայի) ծրագիր (Հավելված 4**)**

6.5. Պրակտիկայի գնահատման թերթիկ (Հավելված 5**)**

6.6. Ծրագրի առարկաների համառոտ նկարագիրը

Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ

Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Հայոց լեզու
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	2
Դասընթացի անցկացման կիսամյակը	1-ին
Մուտքային պահանջներ	-
Դասընթացի	Դասընթացը նպատակ ունի հարստացնել ուսանողի բառապաշարը

Նպատակը	տարբեր ոլորտներում և մասնագիտական տեքստերում կիրառելու համար, ձևավորել ժամանակակից գրական հայերենին համապատասխան խոսք կառուցելու և տարբեր բնույթի տեքստեր, փաստաթղթեր կազմելու կարողություն:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	<p>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> գիտակցել լեզվի կարևորությունը մտքերի ձևավորման և արտահայտման գործում: տարբերել բառապաշարի շերտերը և կիրառել համապատասխան ոլորտներում: կազմել մասնագիտական տեքստեր: տիրապետել գործնական գորությունների հիմնական տեսակների (նամակ, դիմում, արձանագրություն, ինքնակենսագրություն և այլն) կազմմանը:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	<p>Դասավանդման մեթոդներ.</p> <p>ակտիվ և ինտերակտիվ մեթոդներ. մտագրոհ, ձնագնդի մեթոդ, բանավեճ-քննարկում, «Կլոր սեղան» մեթոդ (որևէ հարցի քննարկում, կարծիքների համեմատություն, մտքերի, գաղափարների ձևավորում, արտահայտում), «Ուղեղի փոթորիկ» (լուծումների, մտքերի հավաք, բոլոր առաջարկների վերլուծություն և ամենահետաքրքիր տարբերակի ընտրություն):</p> <p>Ուսումնառության մեթոդներ.</p> <p>Երկխոսություն, քննարկումներ, ինքնուրույն, թիմային աշխատանքներ, զեկուցումներ, ելույթներ, բանավեճեր:</p>
Գնահատման մեթոդները	Քննություն՝ թեստային առաջադրանք էլեկտրոնային տարբերակով հանձնելու համար:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Օտար լեզու (ռուսերեն)
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	ռուսերեն
Կրեդիտները (ECTS)	4

Դասընթացի անցկացման կիսամյակը	1-ին
Մուտքային պահանջներ	-
Դասընթացի նպատակը	Ապահովել ոռութենի որպես հաղորդակցման միջոցի օգտագործումը առօրյառում, կենցաղային, մշակութային և կրթական ոլորտներում:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	<p>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> օգտագործել ոռութենի առօրյա-խոսակցական, համագործածական, ընդհանուր գիտական բառապաշարը համապատասխան ոլորտներում, պատմել իր կենսագրությունը, իր ապագա մասնագիտության, պլանների, երկրի մասին, կրթական, մշակութային, ընդհանուր մասնագիտական բնույթի տեքստերից օգտվելով, ներկայացնել անհրաժեշտ տեղեկություն, ձևակերպել սեփական կարծիքը կարդացած նյութի վերաբերյալ, ինքնուրույն կազմել տարբեր ոճերի փոքրածավալ տեքստեր:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդներ. բացատրություն, տեսալսողական (աудиовիզուալներ), ինդուկտիվ, համադրության մեթոդներ: Ուսումնառության մեթոդներ. գրավոր աշխատանք, խոսքային (վերbalներ) մեթոդ, քննարկում, ուսուցողական խաղեր:
Գնահատման մեթոդները	Ընթացիկ աշխատանքի գնահատում դասերի ժամանակ, ինքնուրույն աշխատանք, ընթացիկ (միջանկյալ) քննություն՝ թեստ, ավարտական քննություն՝ թեստ:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Հայոց պատմություն
Դասընթացի տեսակը	Պարտադիր

Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	2
Դասընթացի անցկացման կիսամյակը	1-ին
Մուտքային պահանջներ	-
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի խորացնել ուսանողների գիտելիքները պատմության վերաբերյալ, զարգացնել պատմատրամաբանական մտածողությունը և հնարավոր բարդ իրադրություններում ճիշտ կողմնորոշվելու կարողությունը:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. <ul style="list-style-type: none">Կիրառել քննադատական մտածողություն անցյալի և ներկայի պատմական դեպքերը գնահատելիս,Իենվել պատմական փաստերի քննական վերլուծության վրա՝ ներկայիս քաղաքական գործնթացները գնահատելիս,Ներկայացնել իրադրությունները ժամանակի և տարածության մեջ (աշխարհագրական դիրք, բնական ռեսուրսներ և այլն),Գնահատել աշխարհագրական իրողության հաշվառմամբ զարգացման ժամանակակից միտումները:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդներ. Տեղեկատվական և ակնարկային դասախոսություններ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, սահիկահանդեսի ցուցադրում, ուսուցողական ֆիլմերի, տեսանյութերի դիտում, բացատրական-ցուցադրական, արտալսարանային դասախոսություններ, թեմատիկ քննարկումներ և բանավեճեր, հարց և պատասխան, կլոր սեղան, թիմային աշխատանք, մտաբերում, քննադատական մտածողություն, մտագրոհ:
Գնահատման մեթոդները	Ուսումնառության մեթոդներ. Դասախոսության ունկնդրում, ուսումնամեթոդական և էլեկտրոնային գրականության ուսումնասիրություն, մասնագիտական տեսանյութերի և հեռուստահաղորդումների դիտում, ինքնուլույն աշխատանքների կատարում, ինտերակտիվ քննարկումներ:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն

Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Բարձրագույն մաթեմատիկա 1-2
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	1 -ին կիսամյակում, 5 կրեդիտ 2 -րդ կիսամյակում, 6 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	1 -ին, 2-րդ
Մուտքային պահանջներ	-
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի զարգացնել ապագա ճարտարագետի տրամաբանական և վերլուծական մտածողությունը, սովորեցնել ուսման և աշխատանքի հետ առընչվող կիրառական բազմաբնույթ խնդիրների լուծման մեթոդները:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. <ul style="list-style-type: none">• լուծել բարձրագույն մաթեմատիկայի պարզագույն խնդիրներ,• կատարել մաթեմատիկական գործողություններ, տիրապետելով ածանցման և ինտեգրման գործողություններին,• կիրառել գծային հանրահաշվի, մաթեմատիկական անալիզի և հավանականությունների տեսության բաժիններից ստացած գիտելիքները գործնական խնդիրներում,• վերլուծել կիրառական խնդիրները,• գնահատել խնդիրների լուծման հնարավոր ուղիները,• կիրառել հիմնական մեթոդները գործնական խնդիրներ լուծելիս:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդներ. դասախոսություն, լաբորատոր պարապմունքներ, տեսական նյութի մատուցում և համապատասխան խնդիրների քննարկում, գործնական խնդիրների լուծում: Ուսումնառության մեթոդներ. կատարել համապատասխան հանձնարարությունները, կիրառական խնդիրների ուսումնասիրություն, ինքնուրույն վերլուծել համապատասխան խնդիրները, գտնել տվյալ խնդրի կիրառական նշանակությունը:
Գնահատման մեթոդները	Հաճախումներ, ինքնուրույն աշխատանք, միջանկյալ և ամփոփիչ քննություններ թեստային տարրերակով:

Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Կիրառական ինֆորմատիկա
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	5
Դասընթացի անցկացման կիսամյակը	1 –ին
Մուտքային պահանջներ	-
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի ուսումնասիրել ինֆորմացիայի մշակման և վերլուծության եղանակներն ու մեթոդները, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները ոլորտային խնդիրները լուծելիս և ուսանողի մոտ ձևավորել բազային գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ գրասենյակային և մասնագիտական ծրագրային միջոցների կիրառման համար:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	<p>Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> օգտագործել համակարգչային բազային և մասնագիտական ծրագրային միջոցները աշխատանքային գործունեության ընթացքում, մշակել մասնագիտական ոլորտին վերաբերող էլեկտրոնային փաստաթղթեր, պատրաստել մասնագիտական ոլորտին վերաբերող շնորհանդեսներ, օգտագործել բազային ծրագրային միջոցներ՝ մասնագիտական ոլորտի հաշվարկներ իրականացնելու համար, մշակել մասնագիտական ոլորտին վերաբերող պարզ տվյալների բազաներ՝ օգտագործելով տեղեկատվական տեխնոլոգիաներ, միավորել համակարգչային ծրագրային ապահովման գիտելիքներն ու հմտությունները՝ ընդհանուր նշանակության և մասնագիտական ոլորտի խնդիրներ լուծելու համար:

<p>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</p>	<p>Դասավանդման մեթոդներ. Ներկայացում-վիզուալիզացիա, Երկխոսություն, խմբային քննարկում:</p> <p>Ուսումնառության մեթոդներ. համակարգչային խնդիրների լուծում, ուսումնամեթոդական գրականության և այլ նյութերի ուսումնասիրում, ուսանողների կողմից լսարանային առաջադրանքների կատարում՝ կիրառելով MS Office փաթեթի և MATLAB ծրագրակազմերը, ինքնուրույն աշխատանքի պատրաստում և ներկայացում:</p>
<p>Գնահատման մեթոդները</p>	<p>Լսարանում կատարվող համակարգչային առաջադրանք: Ընթացիկ թեստ: Ինքնուրույն աշխատանք: Վերջնական համակարգչային թեստավորում:</p>
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
<p>Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)</p>	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
<p>Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)</p>	
<p>Դասընթացի անվանումը</p>	Գրաֆիկայի հիմունքներ
<p>Դասընթացի տեսակը</p>	Պարտադիր
<p>Դասավանդման լեզուն</p>	հայերեն
<p>Կրեդիտները (ECTS)</p>	5
<p>Դասընթացի անցկացման կիսամյակը</p>	1 –ին
<p>Մուտքային պահանջներ</p>	-
<p>Դասընթացի նպատակը</p>	Դասընթացը նպատակ ունի ուսումնառողների մոտ զարգացնել հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտության ոլորտում կիրառվող մեթենաների և սարքավորումների, դրանց հանգույցների և մեթենամասերի, հավաքական գծագրերում նախագծման մեթոդների գիտելիքներ և հմտություններ, ինչպես նաև գործող ստանդարտներից ու նախագծային փաստաթղթերի միացյալ համակարգից (ЕСКД - единая система конструкторской документации), տեխնիկական տեղեկագրքերից ու գրականությունից օգտվելու ունակություններ:

	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	<ul style="list-style-type: none"> Նկարագրել օբյեկտների պրոյեկտման (նրանց գծագրերի ձևավորման և ձևափոխման) սկզբունքները, տիպային խնդիրների լուծման ընդհանուր մեթոդները, գծագրերի վրա հիմնական մետրական և դիրքային խնդիրների լուծման ալգորիթմները, հարթության վրա տարածական օբյեկտների պատկերման կանոնները, բացատրել տարբեր երկրաչափական խնդիրների գրաֆիկական լուծման մեթոդներն ու ալգորիթմները, Ներկայացնել հատուկ մասնագիտական խնդիրների լուծման նպատակով լծորդումների, կոնսականությունների և թերությունների կառուցման սկզբունքները, պրոյեկտման եղանակով տարածական մարմինների պրոյեկցիաների կառուցման սկզբունքները, տարածական պատկերների անհրաժեշտ պրոյեկցիաների և չափերի տեղակայման կանոնները, աքսոնոմետրիկ պրոյեկցիաների կառուցման ընդհանուր մեթոդներն ու ալգորիթմները, հետևել տեխնիկական փաստաթղթերի ձևակերպմանը, գործող ստանդարտներին, տեխնիկական պայմաններին, դրույթներին ու հրահանգներին, կազմել մեքենաների, մեքենամասերի, դրանց հանգույցների մոդելները՝ չափանիշներին համապատասխան, կիրառել մեքենաների, դրանց հանգույցների, մեխանիզմների կառուցվածքային և կինեմատիկական սխեմաների պատկերման կանոնները:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդներ. բացատրություն, էլեկտրոնային ուսուցում, ցուցադրություն, հեռավար ուսուցում: Ուսումնառության մեթոդներ. համագործակցային աշխատանք, համատեղ ուսուցում, քննարկում-բանավեճ:
Գնահատման մեթոդները	Ռուբրիկների կիրառում, լաբորատոր գեկուց, բազմագործոնային համակարգ (100 բալանց սանդղակով):
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը	

(պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Ֆիզիկա
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	6
Դասընթացի անցկացման կիսամյակը	1 –ին
Մուտքային պահանջներ	-
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի ծանոթացնել ուսանողներին հիմնական ֆիզիկական երևոյթների, տեխնիկական և տեխնոլոգիական տարրեր բնագավառներում և խնդիրներում նրանց կիրառությունների հետ, զարգացնել նյութի կառուցքի, տարրեր նյութերում և միջավայրերում ընթացող մեխանիկական, ջերմային, ճառագայթային և այլ ֆիզիկական պրոցեսների վերաբերյալ պատկերացումները:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	<p>Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • կիրառել ֆիզիկական պրոցեսների մեխանիզմներ հիդրոտեխնիկական կառուցվածքների աշխատանքային սկզբունքներում, • կիրառել ֆիզիկայի փորձնական եղանակները արտադրության պրոցեսների արդյունքում ստացված արտադրանքի որակի հետազոտություններում, • ստացած գիտելիքները կիրառել մեքենաների, սարքավորումների, հիդրոտեխնիկական կառուցցների նախագծման, դրանց իրականացման և շինարարության անհրաժեշտ տեխնոլոգիաների մշակման, էներգիական հզորությունների, կենսագործունեության անվտանգության չափանիշներին համապատասխանության, ֆիզիկա-տեխնիկական վերահսկման խնդիրներում, • կիրառել ֆիզիկայի բնագավառի տեսական գիտելիքները արտադրական գործընթացներում, նոր տեխնոլոգիաների ներդրման և զարգացման նպատակով: • վերլուծել հողի և ջրի ֆիզիկաքիմիական ցուցանիշները, • ապահովել մեքենաների, սարքավորումների, հիդրոտեխնիկական կառուցվածքների անխափան աշխատանքը, • կատարել մեքենաների, սարքավորումների, հիդրոտեխնիկական կառուցվածքների տարրողությունների և հզորությունների

	Ընթացիկ հաշվարկ:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդներ. Դասախոսություն, լաբորատոր պարապմունքներ, անհմացիոն նյութերի ցուցադրում և մեկնաբանում: Ուսումնառության մեթոդներ. Մեսական նյութի յուրացում, լաբորատոր աշխատանքների կատարում, ինքնուրույն աշխատանքների պատրաստում:
Գնահատման մեթոդները	Հաճախումներ, ինքնուրույն աշխատանքներ, միջանկյալ և ամփոփիչ քննություններ:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Հայոց լեզու և խոսքի մշակույթ
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	2
Դասընթացի անցկացման կիսամյակը	2-րդ
Մուտքային պահանջներ	«Հայոց լեզու»
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի կարողանալ ձևավորել մշակված և հղված խոսք՝ կյանքի տարբեր ոլորտներում հանդես գալու համար, ունենալ տեքստաբանական գրագիտություն՝ տարաբնույթ տեքստերի (ռեֆերատ, գեկուցում, կուրսային աշխատանք, պաշտոնական գրագրություն և այլն) կազմելու և ներկայացնելու հմտություն:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	<p>Անկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա</p> <ul style="list-style-type: none"> • օգտագործել ստացած գիտելիքները բանավոր և գրավոր խոսք կազմելիս, • կարողանալ ճանաչել և զանազանել գրական ու հրապարակախոսական, վարչական ու տեղեկատվական, ուսումնառական ու գիտական, գրասենյակային և այլ տեքստերը,

	<ul style="list-style-type: none"> կարողանալ կազմել և ձևավորել գրավոր պաշտոնական հաղորդակցման մեջ հաճախ գործածվող կազմակերպական, կարգադրական, տեղեկատվական փաստաթղթեր՝ տիպային օրինակին խիստ համապատասխան, հանդես գալ ռեֆերատ-գեկուցումով և հարցերի դեպքում անկաշկանդ, պատշաճ մակարդակով բանավիճել և պաշտպանել սեփական կարծիքը:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	<p>Դասավանդման մեթոդներ.</p> <p>ակտիվ և ինտերակտիվ մեթոդներ. մտագրոհ, ձնագնդի մեթոդ, բանավեճ-քննարկում, «Կլոր սեղան» մեթոդ (որևէ հարցի քննարկում, կարծիքների համեմատություն, մտքերի, գաղափարների ձևավորում, արտահայտում), «Ուղեղի փոթորիկ» (լուծումների, մտքերի հավաք, բոլոր առաջարկների վերլուծություն և ամենահետաքրքիր տարբերակի ընտրություն):</p> <p>Ուսումնառության մեթոդներ.</p> <p>երկխոսություն, քննարկումներ, ինքնուրույն, թիմային աշխատանքներ, գեկուցումներ, ելույթներ, բանավեճներ:</p>
Գնահատման մեթոդները	Հարցաշարային բանավոր քննություն:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Նյութագիտություն և շիննյութեր
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	5
Դասընթացի անցկացման կիսամյակը	2-րդ
Մուտքային պահանջներ	«Բարձրագույն մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Ընդհանուր քիմիա»:
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի ուսանողներին սոողորեցնել մետաղների ու դրանց համաձուլվածքների առանձնահատկությունները,

	<p>ուսումնասիրել մի կողմից հատկությունների կախումը ստրուկտուրայից, մյուս կողմից՝ ստրուկտուրայի կախումը մշակումից, տալ գիտելիքներ շինարարությունում և հիդրոտեխնիկական կառուցվածքներում կիրառվող բոլոր տեսակի շինարարական նյութերի վերաբերյալ՝ ուսումնասիրելով դրանց տարատեսակներն ու առանձնահատկությունները, տարածավայրերն ու կիրառման բնագավառները:</p>
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	<p>Մոդուլ 1. Անկալվում է, որ «Նյութագիտություն» մոդուլի ավարտին ուսանողը կկարողանա</p> <ul style="list-style-type: none"> մեկնաբանել նյութի կառուցվածքը և հատկությունները, ընտրել համապատասխան նյութի և մշակման գործընթացների ռեժիմները, ենելով շինածոյի շահագործման պայմաններից, նշել նյութերի կիրառման բնագավառները: <p>Մոդուլ 2. Անկալվում է, որ «Շինարարական նյութեր» դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա</p> <ul style="list-style-type: none"> դասակարգել հիդրոտեխնիկական և ճարտարագիտական կառուցվածքներում, շենքերում և շինարարություններու օգտագործվող շինարարական նյութերը, թվարկել շինարարական նյութերի համապատասխան ֆիզիկամեխանիկական հատկությունները, ներկայացնել շինարարական նյութերի անհրաժեշտ պահանջները ըստ նորմերի, կանոնների, պետական ստանդարտների և տեխնիկական պայմանների:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	<p>Դասավանդման մեթոդներ.</p> <p>Դասախոսություն, սեմինարներ, դիդակտիկ նյութեր, լաբորատոր փորձարարական աշխատանքներ, ինտերակտիվ դասախոսություն, լսարանային քննարկումներ, համացանցի նյութեր:</p> <p>Ուսումնառության մեթոդներ.</p> <p>Քննարկումներ, ինքնուրույն աշխատանքներ, էլեկտրոնային գրականություն, համացանց:</p>
Գնահատման մեթոդները	Գրավոր և բանավոր ընթացիկ հարցումներ, լաբորատոր և ինքնուրույն աշխատանքի հանձնում, միջանկյալ և ամփոփիչ քննություն թեստային տարրերակով:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը	

(պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն)
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն
Կրեդիտները (ECTS)	8
Դասընթացի անցկացման կիսամյակը	2-րդ
Մուտքային պահանջներ	-
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի բարձրացնել ուսանողների օտար լեզվի իմացության մակարդակը, զարգացնել հաղորդակցական կոմպետենցիան:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. <ul style="list-style-type: none"> թարգմանել տեքստեր, վերարտադրել կարդացած տեքստը, վերլուծել ընթերցած տեքստը օտար լեզվով, գործածել բավականաչափ քերականական կառույցներ, գործածել առօրյա կարիքների հետ կապված մտապահված սահմանափակ բառապաշար, հաղորդակցվել անցած թեմաների շուրջ:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդներ՝ «Մտագրոհ», խճանկարի մեթոդ, անհատական աշխատանք, բանավեճ, ֆիլմերի դիտում, լսողական վարժություններ, երկխոսություն, քննարկումներ, թիմային աշխատանքներ, տեսասահիկներով ներկայացում:
Գնահատման մեթոդները	Ուսումնառության մեթոդներ՝ տեքստերի թարգմանություն, զրոյց:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը	

(պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Ընդհանուր քիմիա
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	4
Դասընթացի անցկացման կիսամյակը	2-րդ
Մուտքային պահանջներ	-
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի ուսանողներին ծանոթացնել Քիմիա գիտության բոլոր ճյուղերի տեսական և կիրառական դրույթներին, որոնք օգտակար կինեն մասնագիտական գործներության շրջանակներում, ուսանողներին գիտելիք փոխանցել գյուղատնտեսության մեջ օգտագործվող հանքային և օրգանական պարարտանյութերի քիմիական կազմի, հողում տեղի ունեցող ֆիզիկաքիմիական պրոցեսների, վառելանյութերի տեսակների, մետաղաձուլման հիմքում ընկած թթուների, հիմքերի, աղերի, կենսածին տարրերի մասին, ծանոթացնել ավտոմոբիլային տրանսպորտից արտանետվող գազերի (օքսիդների) քիմիական բաղադրությանը, օքսիդների կիրառմանը գյուղանտեսության մեջ, շրջանառությանը օդում, հողում, կարևորագույն թթուներին, H_2SO_4 -ի կիրառմանը ավտոմոբիլի ակումբատորներում, ուսանողներին փոխանցել տեսական գիտելիքները փորձնականորեն կիրառելու հմտություններ:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	<p>Անկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> պահպանել անվտանգությունը ռեակտիվների և լուծույթների, ժամանակակից քիմիական սարքավորումների հետ աշխատելիս, ներկայացնել մեքենաշինության մեջ մետաղների և համաձուլվածքների նպատակային կիրառման առանձնահատկությունները, կիրառել ստացած գիտելիքները մասնագիտական խնդիրների լուծման համար՝ հստակ պատկերացում ունենալով ուսումնասիրվող օբյեկտի քիմիական կազմի առանձնահատկությունների, համակարգերում ընթացող քիմիական պրոցեսների մասին:

<p>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</p>	<p>Դասավանդման մեթոդներ.</p> <p>Դասախոսություններ (ա.թ. PPT ծրագրով, տեսաերիզների ցուցադրում, SMART կամ սովորական կիրառությամբ), սեմինար-քննարկումներ (ինքնուրույն առաջադրանքներ՝ գեկուցումներ, լաբորատոր ստուգողական աշխատանքներ) և փորձարարական աշխատանքներ:</p> <p>Ուսումնառության մեթոդներ.</p> <p>Ռեֆերատների պատրաստում, լաբորատոր փորձերի կատարում, խնդիրների լուծում և հաշվարկներ, տեսական հարցերի քննարկում, քիմիական վարժությունների կատարում</p>
<p>Գնահատման մեթոդները</p>	<p>Բանավոր հարցումներ, ինքնուրույն, անհատական և խմբակային աշխատանքներ, լաբորատոր աշխատանքների հանձնում, ընթացիկ ստուգումներ, միջանկյալ և ամփոփիչ քննություններ:</p>
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
<p>Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)</p>	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
<p>Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)</p>	
<p>Դասընթացի անվանումը</p>	Հասարակագիտական առարկաների մոդուլներ (Հայոց պատմություն, Մշակութաբանություն, Քաղաքագիտություն, Փիլիսոփայություն)
<p>Դասընթացի տեսակը</p>	Պարտադիր
<p>Դասավանդման լեզուն</p>	հայերեն
<p>Կրեդիտները (ECTS)</p>	6
<p>Դասընթացի անցկացման կիսամյակը</p>	2-րդ
<p>Մուտքային պահանջներ</p>	-
<p>Դասընթացի նպատակը</p>	Դասընթացը նպատակ ունի նպաստել ուսանողների աշխարհայացքի ընդլայնմանը, քաղաքացիական դիրքորոշում ունենալու կարողության ձևավորմանը, ուսանողների մոտ հետաքրքրություն արթնացնել հումանիտար գիտությունների և արվեստի նկատմամբ, ձևավորել հասարակության առնչվող խնդիրների նկատմամբ այլընտրանքային մոտեցումներ ցուցաբերելու կարողություն, նպաստել համամարդկային արժեքների համատեքստում ազգային պատմության և մշակույթի արժեքների ուսանողների մշակութային ճաշակի

	գարգացմանը:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	<p>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • հիմնավորել սեփական տեսակետներն ու դիրքորոշումները հասարակական երևոյթները գնահատելիս, • քննադատորեն վերլուծել և ամփոփել հասարակական գործնթացներին վերաբերվող տեղեկատվությունը, • բանավիճել՝ պահպանելով փաստարկման կանոնները (այդ թվում՝ էթիկական), • ներկայացնել գաղափարների ազդեցությունը հասարակության զարգացման վրա (փիլխոփայական միտք, քաղաքական գաղափարներ, մշակութային ձեռքբերումներ), • բնութագրել ազգային յուրահատկությունները մշակութային բազմազանության համատեքստում:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	<p>Դասավանդման մեթոդներ.</p> <p>տեղեկատվական և ակնարկային դասախոսություններ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, գննական մեթոդներ (նկարագրումներ, սահմանադրույթի ցուցադրում, ուսուցողական ֆիլմերի, լուսանկարների, տեսանյութերի դիտում), ճանաչողական-ստեղծագործական մեթոդ (վերաբերադրողական՝ բացատրականցուցադրական դասախոսություններ), համագործակցային ուսուցման մեթոդներ (շրջագայություն պատկերասրահում), թեմատիկ քննարկումներ և բանավեճեր, հարց և պատասխան, կլոր սեղան, թիմային աշխատանք, մտաբերում, քննադատական մտածողություն, մտագրոհ:</p> <p>Ուսումնառության մեթոդներ.</p> <p>դասախոսության ոնկնդրում, ուսումնամեթոդական, էլեկտրոնային գրականության ուսումնասիրում, մասնագիտական տեսանյութերի և հեռուստահաղորդումների դիտում, ինքնուրույն աշխատանքների կատարում, ինտերակտիվ քննարկումներ:</p>
Գնահատման մեթոդները	Հաճախումներ, ինքնուրույն աշխատանք, ընթացիկ և ամփոփիչ քննություններ:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի	Տեսական մեխանիկա

անվանումը	
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	5
Դասընթացի անցկացման կիսամյակը	3-րդ
Մուտքային պահանջներ	«Բարձրագույն մաթեմատիկա»
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի ապագա մասնագետի համար հնարավորություն ընձեռնել յուրացնելու Տեսական մեխանիկայի մեթոդները ստացած գիտելիքները գործնականում կիրառելու, տրամաբանական, ինքնուրույն գործունեությունը և ստեղծագործական ունակությունները զարգացնելու նպատակով։ Տեսական մեխանիկայի դասընթացը միտված է զարգացնելու ապագա ճարտարագետի տրամաբանական և վերլուծական մտածողությունը, սվոլորեցնելու ուսման և աշխատանքի հետ առնչվող ճարտարագիտական բազմաբնույթ խնդիրների լուծման մեթոդները։
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	<p>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> հասկանալ ստատիկայի հիմնական խնդիրները, կազմել գուգամիտվող ուժահամակարգերի հավասարակշռության հավասարումներ, կիրառել միևնույն և հակառակ կողմերն ուղղված երկու ուժերի գումարման կանոնները, կազմել կամայական հարթ ուժահամակարգերի հավասարակշռության պայմանները, կետի շարժման հավասարումները, կետի ուղղագիծ շարժման դիֆերենցիալ հավասարումները որոշել պինդ մարմնի հենարանային հակագրումները, կետի հետագիծը, արագությունը, լրիվ, շոշափող և նորմալ արգացումները; կիրառել մարմինների ծանրության կենտրոնների որոշման մեթոդները կիրառական խնդիրներում։
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	<p>Դասավանդման մեթոդներ.</p> <p>Դասախոսություն, լաբորատոր պարապմունքներ, տեսական նյութի մատուցում և համապատասխան խնդիրների քննարկում, գործնական խնդիրների լուծում։</p>

	<p>Ուսումնառության մեթոդներ.</p> <p>կատարել համապատասխան հանձնարարությունները, կիրառական խնդիրների ուսումնասիրություն, դրանց համապատասխան տնային հանձնարարությունների կատարում, ինքնուրույն հասկանալ համապատասխան կիրառական խնդիրները, հասկանալ տվյալ խնդրի կիրառական նշանակությունը:</p>
Դնահատման մեթոդները	Հաճախումներ, ինքնուրույն աշխատանքներ, միջանկյալ և ամփոփիչ քննություններ թեստային տարրերակով:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ 202. – 202.	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Նյութերի դիմադրություն
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	6
Դասընթացի անցկացման կիսամյակը	3-րդ
Մուտքային պահանջներ	«Բարձրագույն մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Տեսական մեխանիկա», «Գրաֆիկայի հիմունքներ», «Համակարգչային գրաֆիկա», «Նյութագիտություն»:
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի ուսանողներին տալ տեսական գիտելիքներ մեքենաների, սարքավորումների և շինարարական կառուցվածքների ամրության, կոշտության, կայունության ու աշխատանքի հուսալիության հաշվարկային մեթոդների վերաբերյալ: Ընդհանրացնելով բնագիտական ու ճարտարագիտական դասընթացներից (մաթեմատիկա, ֆիզիկա, տեսական մեխանիկա, նյութագիտություն) ստացած գիտելիքները՝ ուսանողներին նախապատրաստել «Կիրառական մեխանիկա», «Գրունտների մեխանիկա», «Հիմքեր և հիմնատակեր» և «Ճարտարագիտական կոնստրուկցիաներ» առարկաների ուսումնասիրմանը: Ուսանողների մոտ ձևավորել մեքենաների, սարքավորումների և շինարարական կառուցվածքների նախագծման, շահագործման ու նորոգման գործնական հաշվարկների վերաբերյալ գիտելիքներ, հմտություններ

	<p>ու կարողություններ:</p> <p>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> Ներկայացնել նյութերի դիմադրության հիմնական խնդիրները, հիպոթեզները, սկզբունքները և հաշվարկային սխեմաների կազմման ու կառուցվածքի տարրերի ամրության, կոշտության և կայունության հաշվարկների մեթոդները, Նկարագրել նյութերի մեխանիկական հատկությունների որոշման համար ստանդարտ փորձարկումների մեթոդները, տարրեր դեֆորմացիաների ու բեռնավորման դեպքերի համար լարումների ու դեֆորմացիայի հաշվարկային բանաձևները և ամրության, կոշտության ու կայունության պայմանները, Ներկայացնել դեֆորմացիայի երևոյթը, ամրության դասական տեսությունները և նյութերի պլաստիկության ցուցանիշները, հարթ հատույթների երկրաչափական բնութագրերի հաշվարկի տեսության հիմունքները, թույլատրելի լարման և ամրության պաշարի գործակցի ընտրության սկզբունքը:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	<p>Դասավանդման մեթոդներ.</p> <p>Դասախոսություն, քննարկումներ, խմբային աշխատանք՝ կոնկրետ առաջադրանքի կատարման նպատակով, տարրեր խնդիրների լուծում, լաբորատոր սարքերով փորձերի կատարում, չափումներ և դիտարկումներ:</p> <p>Ուսումնառության մեթոդներ.</p> <p>Հանձնարարված գրականության ընթերցում ինքնուրույն և տնային աշխատանքի կատարում:</p>
Գնահատման մեթոդները	Գրավոր (միջանկյալ և ամփոփիչ քննություններ), բանավոր (ինքնուրույն աշխատանքի ներկայացում), ռուբրիկներ (ինքնուրույն աշխատանքներ, լաբորատոր աշխատանքներ), թեստեր:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Համակարգչային գրաֆիկա

Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	6
Դասընթացի անցկացման կիսամյակը	3-րդ
Մուտքային պահանջներ	«Գրաֆիկայի հիմունքներ», «Կիրառական ինֆորմատիկա»:
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի ուսումնառողների մոտ զարգացնել հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտության ոլորտում կիրառվող մեքենաների և սարքավորումների, դրանց հանգույցների և մեքենամասերի, վերջիններիս հավաքական գծագրերում դրանց երկրաչափական մոդելավորման և համակարգչային նախագծման մեթոդների գիտելիքներ և հմտություններ, ինչպես նաև քարտեզագրման, հողաշինարարական հաշվարկի տեխնիկայից օգտվելու ունակություններ:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	<p>Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> AutoCAD ծրագրով կազմել մեքենամասերի մոդելները՝ չափանիշներին համապատասխան, վերլուծել ընդունված որոշումների հետևանքով ստացված արդյունքները, հետևել տեխնիկական փաստաթղթերի ձևակերպմանը, գործող ստանդարտներին, տեխնիկական պայմաններին, դրույթներին ու հրահանգներին, օգտագործել տեխնիկական տեղեկատվական գրականությունը, կիրառել գյուղատնտեսական ջրամատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ցանցերի և կառույցների զարգացման համար համակարգչային նախագծման մեթոդներն ու դրանց հանգույցների, և կինեմատիկական սխեմաների պատկերման կանոնները, տիրապետել ժամանակակից հողային ռեկուլտիվացիոն օբյեկտների և բնապահպանական կառույցների, գյուղատնտեսական ջրամատակարարման համակարգերի, ջրամատակարարման և ջրահեռացման, տարածքների ինժեներական պաշտպանության կառույցների համակարգչային նախագծման և պատկերման կանոններին:

Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդներ. բացատրական մեթոդ, էլեկտրոնային ուսուցում, ցուցադրական մեթոդ, հեռավար ուսուցում: Ուսումնառության մեթոդներ. համագործակցային աշխատանք, համատեղ ուսուցում, քննարկում-բանավեճ:
Գնահատման մեթոդները	Ռուբրիկների կիրառում, լաբորատոր զեկուց, ինչպես նաև բազմագործոնային համակարգով (100 բալանց սանդղակով):
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Ճարտարագիտական գեոդեզիա
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	6
Դասընթացի անցկացման կիսամյակը	3-րդ
Մուտքային պահանջներ	-
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի ուսանողներին սովորեցնել և ծանոթաց-նել հատակագծերին ու քարտեզներին, դրանց կիրառական նշանակությունյանը, գեոդեզիական գործնական մեթոդների կիրառմանը ներկայացվող որակի ու ճշտության պահանջներին, տեխնիկական գործարարությունից առաջացող սխալներին և դրանց ազդեցությանը վերջնական արդյունքի որակի վրա: Որոշել գեոդեզիական մեթոդների ու եղանակների կիրառման ամենանպատակահարմար տարրերակը, գնահատել գեոդեզիական գործողությունների տարրեր փոփերում առաջացած սխալները և նրանց ազդեցությունը վերջնական արդյունքի վրա, Ծանոթացնել գծի երկարության, կետի կոորդինատների, բացարձակ բարձրության և մակերեսների չափման, հողամասերի նախագծման, տեղագրական հանույթային աշխատանքների կատարման

	<p>մեթոդներին ու եղանակներին:</p>
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	<p>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> Կիրառել գեղեցիկական սարքեր և գործիքներ, Կիրառել մաթեմատիկայի, ֆիզիկայի, աշխարագրության, երկրաբանության, գծագրական երկրաչափության տեսական և գործնական գիտելիքները, Կատարել դաշտային պայմաններում կոնկրետ գեղեցիկական չափումներ Մշակել չափման արդյունքները, Կառուցել տեղանքի հատակագիծը և առանձին տրասսաների (ուղեգծերի) պրոֆիլները:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	<p>Դասավանդման մեթոդներ.</p> <p>Տեսական նյութի բացատրություն, զրույց, լաբորատոր, գործնական աշխատանքի բացատրություն՝ ցուցադրական նյութերի, սխեմաների, համակարգչային PowerPoint ծրագրի կիրառմամբ, գեղեցիկական գործիքներով ուսումնական չափումների կատարում, արդյունքների մշակում, քննարկումներ: Նախագիծը բնության մեջ իրականացման աշխատանքների կատարում:</p> <p>Ուսումնառության մեթոդներ.</p> <p>Ռեֆերատների պատրաստում և ներկայացում, ուսումնամեթոդական գրականության օգտագործում, հաշվարկագրաֆիկական ինքնուրույն աշխատանքի պատրաստում և ներկայացում, գործնական խնդիրների լուծում, լաբորատոր սարքավորումներով, գործիքներով գեղեցիկական չափումների կատարում, հատակագծաքարական նյութերի պատրաստում և ներկայացում:</p>
Գնահատման մեթոդները	Ռուբրիկների կիրառում, անհատական աշխատանքի ներկայացում, բազմագործոնային համակարգ (100 բալանց սանդղակով):
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Գյուղատնտեսության Էկոնոմիկա
Դասընթացի տեսակը	Պարտադիր

Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	4
Դասընթացի անցկացման կիսամյակը	3-րդ
Մուտքային պահանջներ	«Վիճակագրություն»:
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի ուսանողների մոտ ձևավորել համակարգված մասնագիտական գիտելիքներ և տնտեսագիտական մտածելակերպ՝ առանձին տնտեսավարողների և ամբողջ ճյուղի ռեսուրսային ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացման վերաբերյալ:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	<p>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • կոնկրետ իրավիճակներում կայացնել տնտեսագիտական, կազմակերպական և կառավարչական որոշումներ, • բացահայտել տնտեսագիտական բնույթի հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, • ներկայացնել արտադրական ծախսերի, դրանց վրա ազդող գործոնների և ծախսերի օպտիմալացման ուղիները, • գնահատել տնտեսավարողների ռեսուրսաօգտագործման արդյունավետությունը, • առաջարկել կազմակերպատնտեսական միջոցառումներ, ուղղված կազմակերպության տնտեսական ներուժի զարգացմանը, դրա արդյունավետության բարձրացմանը և մրցունակության ամրապնդմանը:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդներ. ակնարկային դասախոսություններ՝ ինտերակտիվ գործիքների կիրառմամբ, թեմատիկ քննարկումներ, թիմային աշխատանքներ, բանավեճ, շնորհանդես:
Գնահատման մեթոդները	Ուսումնառության մեթոդներ. ուսումնամեթոդական և մասնագիտական գրականության ուսումնասիրություն, հանձնարարականներ:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն

(անվանումը)	
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Վիճակագրություն
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	4
Դասընթացի անցկացման կիսամյակը	3-րդ
Մուտքային պահանջներ	«Կիրառական ինֆորմատիկա», «Բարձրագույն մաթեմատիկա»:
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի վիճակագրական վերլուծության տեսության հիման վրա ուսանողի մոտ ձևավորել ժամանակակից ծրագրերի միջոցով էմպիրիկ վիճակագրական տվյալների ամփոփման, խմբավորման, ստացված արդյունքների հավաստիության գնահատման, ինչպես նաև տարբեր ցուցանիշների միջև փոխկախվածությունների ուսումնասիրության հմտություններ:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա. <ul style="list-style-type: none"> բացատրել ընտրանքային համակցության ձևավորման օրենքները, ընտրանքային և գլխավոր համակցությունների հիմնական բնութագիրների հաշվարկման կանոնները, մշակել ստացված սկզբնական էմպիրիկ տվյալները, կազմել աղյուսակներ և գրաֆիկներ՝ վիճակագրական վերլուծության արդյունքներով, գյուղատնտեսության հիմնական վիճակագրական ցուցանիշներով, օգտագործել բազային ծրագրային միջոցներ՝ մասնագիտական ոլորտի հաշվարկներ իրականացնելու համար, իրականացնել վիճակագրական վերլուծություն՝ օգտագործելով մասնագիտական ծրագրային միջոցներ, միավորել վիճակագրական վերլուծության հմտությունը և համակարգչային ծրագրային միջոցներից օգտվելու կարողությունը՝ մասնագիտական ոլորտի խնդիրներ լուծելու համար:
Դասավանդման և ուսումնառության	Դասավանդման մեթոդներ. թեմայի ներկայացում համակարգչային և մուլտիմեդիալ միջոցների

մեթոդները	օգտագործմամբ, երկխոսություն, խմբային քննարկում: Ուսումնառության մեթոդներ. Խմբային աշխատանքներ, խնդիրների առաջադրում և լուծում՝ համակարգչային ծրագրերի գործիքախմբի օգտագործմամբ, ինքնուրույն /հետազոտական աշխատանք, վերլուծությունների պատրաստում, գեկուցների, լսարանային ցուցադրությունների և այլ աշխատանքների պատրաստում և հրապարակային ներկայացում (պրեզենտացիա), դասընկերների աշխատանքի կառուցղական քննադատություն, հանձնարարված ինքնուրույն առաջադրանքների գրավոր կամ բանավոր ներկայացում, խմբային աշխատանքների քննարկում /բանավեճ/ դերախաղ, հետազոտությունների արդյունքների ինտերակտիվ ներկայացում և այլն:
Գնահատման մեթոդները	Լսարանում Quizizz- թեստերով թեմայի ամփոփում-գնահատում, լսարանում կատարվող համակարգչային առաջադրանքի գնահատում, ընթացիկ թեստային գնահատում, ինքնուրույն աշխատանքի գնահատում, վերջնական համակարգչային թեստավորում:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Հիդրավիկա
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	6
Դասընթացի անցկացման կիսամյակը	4-րդ
Մուտքային պահանջներ	«Ֆիզիկա», «Բարձրագույն մաթեմատիկա», «Նյութերի դիմադրություն», «Տեսական մեխանիկա»:
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի ուսումնասիրել հեղուկի հավասարակշռության և շարժման օրենքները, մշակելով մեթոդներ դրանց ճարտարագիտական կիրառության նպատակով, ձեռք բերել հմտություններ ճարտարագիտատեխնիկական նախագծերի

	<p>կազմման և կիրառման համար, մելիորացիայի, ջրամատակարարման, ջրարբիացման, հիդրոէներգետիկայի բնագավառներում, դրանց հետագա շահագործման անվտանգության ապահովման հեռանկարներով:</p>
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	<p>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա:</p> <ul style="list-style-type: none"> կատարել հիդրավլիկական հաշվարկ հիդրոտեխնիկական կառուցվածքների, ոռոգման համակարգի տարրերի, ջրամատակարարման և այլ ջրատնտեսական կառուցվածքների համար, կազմել համապատասխան ճարտարագիտատեխնիկական նախագծեր, օգտվել համապատասխան տեխնիկական նորմերից և գրականությունից, նախագծել լծորդող կառուցվածքներ ոռոգման մայր ջրանցքների վրա, ընտրել դրանց տարրերակները, ելնելով տեխնիկատնտեսական արդյունավետության պայմաններից, որոշել կառուցվածքների նպատակահարմար չափերը, ելնելով կենսագործունեության անվտանգության և անվտանգ, անվթար շահագործման անհրաժեշտությունից:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	<p>Դասավանդման մեթոդներ.</p> <p>Դասախոսություն, գործնական, Էլեկտրոնային հարթակ, լաբորատոր փորձեր, համացանց:</p> <p>Ուսումնառության մեթոդներ.</p> <p>Կիրառել տեղեկատվական տեխնոլոգիաներ, համացանց, օգտվել ուսումնամեթոդական գրականությունից:</p>
Գնահատման մեթոդները	Անհատական աշխատանք, միջանկյալ և ամփոփիչ քննություններ թեստերով: Գնահատականը ձևավորվում է բազմագործոնային համակարգով ըստ համապատասխան գնահատման սանդղակի:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Ձեռնարկատիրություն
Դասընթացի տեսակը	Պարտադիր

Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	4
Դասընթացի անցկացման կիսամյակը	4-րդ
Մուտքային պահանջներ	«Գյուղատնտեսության Էկոնոմիկա»
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի ուսանողների մոտ ձևավորել նախաձեռնողականություն և ծեռնարկատիրական մտածողություն: Ստեղծել պայմաններ ուսանողների և գործարանների միջև արդյունավետ համագործակցության համար, ուսուցանել ներկայումս ինքնուրույն բիզնես սկսելու, վարելու հմտություններ և ունակություններ:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	<p>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> բացահայտել ծեռնարկատիրական գործունեության ընթացքում առկա հիմնախնդիրները, հիմնավորել ծեռնարկատիրական որոշումները, գնահատել ներդրումային և նորամուծական ծրագրերի տնտեսական արդյունավետությունը, մշակել բիզնես-ծրագիր, ստարտափ ծրագիր, վերլուծել ագրարային ոլորտում ծեռնարկատիրական գործունեության արդյունավետությունը, առաջադրել հիմնավորված եզրակացություններ տվյալ սուբյեկտի տնտեսական գործունեության վերաբերյալ:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	<p>Դասավանդման մեթոդներ.</p> <p>տեղեկատվական և ակնարկային դասախոսություններ, թեմատիկ քննարկումներ, պրոբլեմային ուսուցում, կիրառելով Զիկսոյի, Պրիզմայի, Սցենարների, մտագրոհ և այլ մեթոդներ:</p> <p>Ուսումնառության մեթոդներ.</p> <p>ինքուրույն աշխատանքների կատարում, ինտերակտիվ քննարկումներ, ուսումնամեթոդական և էլեկտրոնային գրականության ուսումնասիրում:</p>
Գնահատման մեթոդները	Թիմային աշխատանքի գնահատում, ինքնուրույն աշխատանքների գնահատում, թեստավորում:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն

Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Էլեկտրատեխնիկա, վերականգնվող էներգիա և ավտոմատացում
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	5
Դասընթացի անցկացման կիսամյակը	4-րդ
Մուտքային պահանջներ	«Բարձրագույն մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Ընդհանուր քիմիա»:
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի ուսանողներին ուսուցանել էլեկտրատեխնիկայի հիմնական օրենքները և էլեկտրատեխնիկական սարքավորումների կառուցվածքը, հիմնական տեխնիկա-շահագործական բնութագրերը, մեքենայացված աշխատանքների կատարման հիմունքները և սկզբունքները, էլեկտրասարքավորումների շահագործման առանձնահատկությունները գյուղատնտեսությունում, արտադրական և տեխնոլոգիական գործընթացների համայիր էլեկտրիֆիկացման համար անհրաժեշտ համակարգի կազմման նոր մեթոդներ, ծանոթացնել էներգիայի աղբյուրների, դրանց ժամանակակից օգտագործման մեթոդների, այլընտրանքային էներգետիկայի զարգացման խնդիրների և հեռանկարների, այլընտրանքային էներգետիկ կայանքների հաշվարկման մեթոդների հետ, գնահատել դրանց արդյունավետությունը, ինչպես նաև Հայաստանի պայմանների համար էներգիայի վերականգնվող աղբյուրների որակը և պոտենցիալ հնարավորությունները, ուսումնասիրել ավտոմատացման հիմնական տեսակները գյուղատնտեսական արտադրությունում, մելիորացիայի ոլորտում, ինչպես նաև ուսանողներին ծանոթացնել գյուղատնտեսական արտադրական գործընթացներին, որոշել ավտոմատ կառավարման համակարգերի կայունությունը:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	<p>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> թվարկել էլեկտրական հոսանքի տեսակները, հաստատուն և փոփոխական հոսանքների տարբերությունը և էլեկտրական շղթաների հիմնական պարամետրերը, նկարագրել էլեկտրամատակարարման հիմնական

	<p>սկզբունքները, եռափոլ շղթաների առանձնահատկությունները և գոյություն ունեցող էլեկտրական շարժիչները,</p> <ul style="list-style-type: none"> կիրառել էլեկտրական շղթաների հիմնական օրենքները նրանց հաշվարկի համար, հաշվել էներգիայի վերականգնվող աղբյուրներով օբյեկտների ջերմային և էլեկտրական սխեմաները, թվարկել արտադրական գործընթացներում ավտոմատացման տեսակները, մակարդակները, պարզաբանել ավտոմատ կառավարման համակարգերի կայունության չափանիշները, ԱԿՀ-ի կայունության դերը:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	<p>Դասավանդման մեթոդներ.</p> <p>տեսական նյութի բացատրություն (դասախոսություն), լաբորատոր աշխատանքներ, գործնական խնդիրների լուծում:</p> <p>Ուսումնառության մեթոդներ.</p> <p>ուսումնամեթոդական գրականության օգտագործում, ռեֆերատների պատրաստում, ներկայացում, ցուցադրական նյութերի ներկայացում:</p>
Գնահատման մեթոդները	Գնահատումը կատարվում է բազմագործոնային համակարգով (100 բալնոց սանդղակով):
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագրեր (անվանումը)	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Ճարտարագիտական երկրաբանություն
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	4
Դասընթացի անցկացման կիսամյակը	4-րդ
Մուտքային պահանջներ	«Ընդհանուր քիմիա», «Ֆիզիկա», «Համակարգչային գրաֆիկա»:
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի ուսանողին տալ անհրաժեշտ գիտելիքներ երկրաբանության առանցքային հասկացությունների

	մասին, ձևավորել բավարար կարողություններ այդ գիտելիքները մասնագիտական գործնական խնդիրների լուծման ընթացքում կիրառելու համար, աջակցել ուսանողների մոտ ճարտարագիտական մտածողության ձևավորմանը:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	<p>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • ներկայացնել երկրաբանության հիմնական խնդիրները, բաժինները, երկրագնդի կառուցվածքը, • կիրառել երկրաբանական քարտեզներ, • կառուցել երկրաբանական կտրվածքներ, • մեկնաբանել երկրաբանական և ինժեներակրաբանական գործնաբացները և երևոյթները, • լուծել հիդրոերկրաբանական խնդիրներ, • դասակարգել երկրագնդի ջրային պաշարները:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	<p>Դասավանդման մեթոդներ.</p> <p>Դասախոսության, գործնական աշխատանքների տեսական նյութի բացատրություն, ցուցադրական նյութի Էլեկտրոնային ներկայացում, լաբորատոր նմուշների, տիպային օրինակների կիրառում, անհատական հանձնարարականներ, խմբային քննարկում:</p> <p>Ուսումնառության մեթոդներ.</p> <p>Ուսումնամեթոդական գրականության օգտագործում, Էլեկտրոնային հարթակի կիրառում, ինքնուրույն և խմբային աշխատանքների կատարում, համացանց:</p>
Գնահատման մեթոդները	Ռուբրիկների կիրառում, անհատական աշխատանքի ներկայացում, բազմագործոնային համակարգ (100 բալանց սանդղակով):
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Ճարտարագիտական բնապահպանություն
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	4
Դասընթացի անցկացման	4-րդ

Կիսամյակը	
Մուտքային պահանջներ	«Գյուղատնտեսության հիմունքներ», «Ֆիզիկա», «Ընդհանուր քիմիա»:
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի առաջարկվող կրթական ծրագրով հիմնավոր գիտելիքներ հաղորդել գյուղատնտեսական արտադրության միջավայրի էկոլոգիական վիճակի, դրա կայունացման և պահպանման, մարդածին ծանրաբեռնվածության կարգավորման և օպտիմալ կառավարման հիմնախնդիրների, այդ խնդիրների լուծման վերաբերյալ:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա. <ul style="list-style-type: none"> տարբերակել շրջակա միջավայրի առանձին բաղադրիչներին առնչվող էկոլոգիական խնդիրները, դրանց սկզբավորման պատճառները և հետևանքները, ներկայացնել միջավայրի էկոլոգիական վիճակի գնահատականը, էկոլոգիական խնդիրների լուծման սկզբունքները, ուղիները, հնարավորությունները, հիմնավորել գյուղատնտեսական արտադրության միջավայրի վիճակի էկոլոգիական կայունացման և դրա պահպանման պայմաններն ու նախադրյալները, օգտագործել գյուղատնտեսական արտադրության միջավայրի էկոլոգիական վիճակի գնահատման ու բարելավման մեթոդները, տեխնոլոգիաները, տեխնիկական միջոցները և կարողությունները:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդներ. Դասախոսություն, տեսական նյութի ներկայացում, գործնական աշխատանքի թեմաների բացատրություն և հաշվարկներ, հարցումներ՝ «Հարց ու պատասխան» ձևաչափով:
Գնահատման մեթոդները	Ուսումնառության մեթոդներ. Դասավանդվող նյութի ունկնդրում և վերլուծություն, գործնական աշխատանքների մասնակցություն և հաշվարկների կատարում, ինքնուրույն կամ անհատական աշխատանքների կատարում, ուսումնական գրականության ուսումնասիրում:
Գնահատման մեթոդները	Միջանկյալ և ամփոփիչ քննություններ՝ հարցատոմսի կամ թեստի գրավոր պատասխան և բանավոր հարցում: Ինքնուրույն և խմբային աշխատանքներ՝ հանձնարարված թեմայի նյութի գրավոր և բանավոր ներկայացում:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն

(անվանումը)	
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Գյուղատնտեսության հիմունքներ
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	6
Դասընթացի անցկացման կիսամյակը	4-րդ
Մուտքային պահանջներ	«Ֆիզիկա», «Ընդհանուր քիմիա», «Էլեկտրատեխնիկա, վերականգնվող էներգիա և ավտոմատացում» և «Գյուղատնտեսական էկոնոմիկա»:
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակն է ուսանողներին հաղորդել հիմնարար գիտելիքներ դաշտային, բանջարային և պտղահատապտղային մշակաբույսերի տեսակային կազմի, խմբավորման, մշակության տեխնոլոգիաների, ցանքատարածությունների և այգետարածքների հիմնման, տեղաբաշխման և շրջանացման, բաց դաշտում կամ պաշտպանված գրունտում դրանց մշակության նպատակահարմարության, բերքի որակի բարձրացման տնտեսական միջոցառումների և գործնական քայլերի վերաբերյալ: Ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիների տեսակային կազմի, աճի և զարգացման առանձնահատկությունների, բուծվող ցեղերի, կենդանիների կյանքի և տնտեսական օգտագործման ժամկետների, արտակազմվածքի գնահատման մեթոդների և պահվածքի կազմակերպման եղանակների վերաբերյալ: Առարկայի արդյունավետ դասավանդումն ուղղված է համապատասխան բնագավառներում որակյալ մասնագետների միջոցով լուծել այն խնդիրները, որոնք կապված են հողերի և ջրային ռեսուրսների կառավարման, բաց դաշտի և պաշտպանված գրունտի պայմաններում մշակաբույսերի ճիշտ տեղաբաշխման, մշակության արդյունավետ տեխնոլոգիաների կազմակերպման, ինչպես նաև բնական լանդշաֆտների՝ կերպային հանդակների կայուն կառավարման և անասնաբուծության արդյունավետ վարման տեխնոլոգիաների գործարկման հետ:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6)	Մոդուլ 1. Անկալվում է, որ «Բուսաբուծություն» մոդուլի Ակնկարություն • Ներկայացնելու ժամանակաշրջանը կազմում է 6 ամիս:

<p>Վերջնարդյունք</p>	<p>ավարտին ուսանողը կկարողանա.</p> <ol style="list-style-type: none"> Տարբերակել դաշտային և բանջարային մշակաբույսերի հիմնական խմբերն ու սորտերը, մշակաբույսերի շրջանացման գոտիավորման և մշակության տեխնոլոգիական գործընթացների առանձնահատկությունները: Առաջարկել դաշտավարության ոլորտում ցանքաշրջանառությունների արդյունավետ և հիմնավոր տարբերակներ, բնական կերային հանդակների կայուն կառավարում ապահովող գործառույթներ, ապահովելու համար ցանքատարածքների և բնական կերահանդակների արտադրողականության ավելացումն, ինչպես նաև հողերի քայլայման ու լանդշաֆտային բուսածածկի դեգրադացիայի կանխարգելումը:
	<p>Մոդուլ 2. Անկալվում է, որ «Այգեպտղաբուծություն և խաղողագործություն» մոդուլի ավարտին ուսանողը կկարողանա.</p> <ol style="list-style-type: none"> Ներկայացնել պտղահատապտղային բազմամյա բույսերի և խաղող մշակաբույսի հիմնական սորտերը, մշակաբույսերի մշակության էկոլոգիական պայմանները, ագրոտեխնիկան, բերքահավաքի եղանակները, ստացված արտադրանքները, մշակվող սորտերը: Վերլուծել <<-ի պայմաններում, խաղողի և պտղատունների այգիների մշակության ագրոտեխնիկական միջոցառումների կատարելագործման ուղիները: Պտղաբուծության և խաղողագործության ներկա վիճակն ու զարգացման հեռանկարները:
	<p>Մոդուլ 3. Անկալվում է, որ «Անասնաբուծության հիմունքներ» մոդուլի ավարտին ուսանողը կկարողանա.</p> <ol style="list-style-type: none"> Ներկայացնել անասնաբուծության ոլորտում կիրառվող հիմնական գործառույթները՝ կենդանիների կերակրում, պահպան, խնամք, բուծում, մթերքի և հումքի ստացման տեխնոլոգիա: Մեկնաբանել գյուղ՝ կենդանիներից ստացված մթերքների որակի առաջնային ուսումնասիրման, գնահատման, ինչպես նաև հաշվառման կարգը, նորմավորված կերաբաժիններ կազմելու ընթացակարգը տարբեր տեսակի, տարիքի, սեռի, ֆիզիոլոգիական վիճակի ու մթերատվության կենդանիների համար:
Դասավանդման և	Դասավանդման մեթոդներ.

Ուսումնառության մեթոդները	<p>Դասախոսություն, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, համակարգչային ցուցադրություն Power Point տարրերակով: «Ֆորմատիվ հարցումներ», գործնական պարապմունքներ:</p> <p>Ուսումնառության մեթոդներ.</p> <p>Դասախոսությունների ունկնդրում, գործնական աշխատանքներին մասնակցություն, ուսումնամեթոդական գրականության ուսումնասիրում: Ինքնուրույն կամ անհատական աշխատանքների կատարում:</p>
Գնահատման մեթոդները	Ընթացիկ, միջանկյալ և վերջնական ստուգումներն անցկացվում են թեստերի, բանավոր և գրավոր քննությունների միջոցով: Ինքնուրույն աշխատանքների գնահատումն իրականացվում է լսարանային ցուցադրությունների և գեկուցների միջոցով :
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Աշխարհագրական տեղեկատվական համակարգեր
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	6
Դասընթացի անցկացման կիսամյակը	5-րդ
Մուտքային պահանջներ	«Բարձրագույն մաթեմատիկա», «Ճարտարագիտական գեոդեզիա», «Ճարտարագիտական երկրաբանություն», «Կիրառական ինֆորմատիկա», «Համակարգչային գրաֆիկա»:
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի ուսանողին փոխանցել տեսական և գործնական գիտելիքներ աշխարհատեղեկատվական համակարգերի կիրառման հիմնական հասկացողությունները, մեթոդները և սկզբունքները ազրարային ճարտարագիտության ոլորտում խնդիրներ լուծելու նպատակով: Ծանոթացնել ԱՏՀ բնորոշ կիրառությունների ոլորտներին, ռաստերային և վեկտորային տվյալներին, ԱՏՀ տարրերին, քարտեզագրման սկզբունքներին և

	<p>քարտեզների ստեղծմանը, ձևավորել բավարար կարողություններ այդ գիտելիքները մասնագիտական գործնական խնդիրների լուծման ընթացքում կիրառելու համար: Աջակցել ուսանողների մոտ ճարտարագիտական մտածողության ձևավորմանը:</p>
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	<p>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> սահմանել աշխարհագրական տեղեկատվական համակարգի (GIS) հասկացությունը. մեկնարանել Երկրատեղեկատվության (գեղինֆորմատիկայի), որպես գիտություն, տեխնոլոգիա, արդյունաբերություն, կիրառությունները. ներկայացնել ԱՏՀ-ի գործառույթային (Փունկցիոնալ) հնարավորությունները. բացատրել GIS-ը որպես տարածական տվյալների և տեխնոլոգիաների ինտեգրման հիմք. վերլուծել ինտելեկտուալիզացիան և որոշումների ընդունման աջակցությունը գեղինֆորմատիկայում. լուծել կիրառական խնդիրներ GIS նախագծի միջոցով:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	<p>Դասավանդման մեթոդներ.</p> <p>Դասախոսություն, գործնական աշխատանքների տեսական նյութի բացատրություն, համակարգչային ծրագրերով աշխատանքներ, ցուցադրական նյութի էլեկտրոնային ներկայացում, անհատական հանձնարարականներ, խմբային քննարկում:</p> <p>Ուսումնառության մեթոդներ.</p> <p>Ուսումնամեթոդական գրականության օգտագործում, էլեկտրոնային հարթակի կիրառում, ինքնուրույն և խմբային աշխատանքների կատարում, տիպային օրինակների կիրառում, համացանցում առկա շտեմարանների կիրառում:</p>
Գնահատման մեթոդները	Ռուբրիկների կիրառում, անհատական աշխատանքի ներկայացում, բազմագործոնային համակարգ (100 բալանց սանդղակով):
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Հիդրոտեխնիկական կառուցվածքներ
Դասընթացի տեսակը	Պարտադիր

Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	6
Դասընթացի անցկացման կիսամյակը	5-րդ
Մուտքային պահանջներ	«Հիդրավլիկա», «Բարձրագույն մաթեմատիկիա», «Համակարգչային գրաֆիկա», «Ճարտարագիտական գեոդեզիա», «Ճարտարագիտական երկրաբանություն», «Հիդրոլոգիա և հոսքի կանոնավորում», «Ըոլքերի դիմադրություն», «Ճարտարագիտական կոնստրուկցիաներ»:
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի ուսանողներին ծանոթացնել տեղանքի բնական պայմաններին համապատասխան կառուցվածքների տիպի ընտրության հիմնական դրույթներին, նրանց համադասավորության խնդիրների լուծմանը, տեղեկացնել հիդրոտեխնիկական կառուցվածքների տիպերի և կոնստրուկցիաների, հատուկ հիդրոտեխնիկական կառուցվածքների մասին, տրամադրել տեղեկություններ հիդրոտեխնիկական կառուցվածքների առանձին կոնստրուկցիաների նախագծման մեթոդների և հաշվարկային հիմնավորման, գետերի վրա հիդրոտեխնիկական հանգույցների առանձին կառուցվածքների նախագծման դրույթների, աշխատանքների արտադրողականության, ջրային ռեսուրսների օգտագործման, շահագործման պայմանների, տեխնիկա - տնտեսական և շրջակա միջավայրի վրա հիդրոտեխնիկական կառուցվածքների ազդեցության գործոնների վերաբերյալ, խթանել հիդրոտեխնիկական կառուցվածքների նախագծման հիմնական փուլերի, ժամանակակից մեթոդներով ֆիլտրացիայի, ամրության, կայունության և այլ հաշվարկների տիրապետմանը ուսանողների համար պահանջվող մակարդակով և խորությամբ:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	<p>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> թվարկել տեղանքի բնական պայմաններին համապատասխան կառուցվածքների տիպի ընտրության հիմնական դրույթները, ներկայացնել նրանց համադասավորության խնդիրների լուծումը, հիդրոտեխնիկական կառուցվածքների առանձին կոնստրուկցիաների նախագծման մեթոդները և հաշվարկային հիմնավորումը, նկարագրել գետերի վրա հիդրոտեխնիկական հանգույցների առանձին կառուցվածքների նախագծման դրույթները, աշխատանքների արտադրողականության, ջրային ռեսուրսների կոմպլեքս օգտագործման, շահագործման պայմանների,

	<p>տեխնիկա - տնտեսական և շրջակա միջավայրի վրա հիդրոտեխնիկական կառուցվածքների ազդեցության գործոնները,</p> <ul style="list-style-type: none"> նախագծել հիդրոտեխնիկական տարբեր կառուցվածքներ, բետոնային և գրունտային պատվարներ, առաջարկել ժամանակակից մեթոդներով ֆիլտրացիայի, ամրության, կայունության և այլ հաշվարկներ՝ պահանջվող մակարդակով և խորությամբ, արտադրությունում կազմակերպել շինարարական և շահագործման աշխատանքներ:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	<p>Դասավանդման մեթոդներ.</p> <p>Դասախոսություն, գործնական, Էլեկտրոնային հարթակ, լաբորատոր փորձեր, համացանց:</p> <p>Ուսումնառության մեթոդներ.</p> <p>Ուսումնամեթոդական գրականություն, համացանց:</p>
Գնահատման մեթոդները	Բանավոր և գրավոր հարցումներ, միջանկյալ և ամփոփիչ քննություններ:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Մելիորացիա և հողերի վերականգնում
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	6
Դասընթացի անցկացման կիսամյակը	5-րդ
Մուտքային պահանջներ	«Ճարտարագիտական գեոդեզիա», «Հիդրավլիկա», «Տեսական մեխանիկա»:
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի ուսանողներին փոխանցել տեսական և գործնական գիտելիքներ և հմտություններ մելիորացիաների կիրառման պայմանների, տեսակների բովանդակության, մելիորատիվ համակարգերի և կառուցվածքների հաշվարկման և

	Նախագծման վերաբերյալ:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	<p>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> ներկայացնել ջրատնտեսական ոլորտում իրականացվող գործնթացները, ջրային և հողային ռեսուրսների կառավարման, պահպանման և օգտագործման նպատակը և խնդիրները, տարբեր տիպի մելիորացիաների կիրառման պայմանները, հողերի մելիորատիվ ռեժիմների կանխատեսման և կարգավորման նպատակով տեղեկատվության հավաքագրման և վերլուծության մեթոդները և սկզբունքները, գնահատել ոռոգման անհրաժեշտությունը, մշակաբույսերի ջրասպառումը, հողի ջրային ռեժիմը, հողի ջրաֆիզիկական հատկությունները, հողում խոնավության պաշարը, մշակաբույսերի ոռոգման ռեժիմը և ոռոգման ջրի պահանջը, մշակել ոռոգման համակարգերի սխեմաներ, ջրախնայողական տեխնոլոգիաների նախագծերը, ոռոգման եղանակներն ու տեխնիկան, սահմանել ոռոգման ջրանցքների ջրի ծախսերը, հիդրավիկական տարրերը, օգտակար գործողության գործակիցները, հիմնավորել ոռոգման փակ ցանցի առավելությունները, հաշվարկի հաջորդականությունը և նախագծման տարբերակների կիրառման պայմանները, հողերի էրոզիայի առաջացման պատճառները, հաշվարկման եղանակները և կանխարգելման ուղիները, կազմել հակաէրոզիոն, աղակալման և գերխոնավացման դեմ պայքարի միջոցառումների նախագիծ:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	<p>Դասավանդման մեթոդներ.</p> <p>Դասախոսություն, գործնական և լաբորատոր պարապմունքներ, ոլորտում կիրառվող սարքավորումների, գործիքների ուսումնասիրություն, դրանց աշխատանքի սկզբունքների ցուցադրում, նախագծային աշխատանքների կատարում, շնորհանդեսներ, արտադրությունում պրակտիկայի անցկացում:</p> <p>Ուսումնառության մեթոդներ.</p> <p>Ուսումնամեթոդական գրականության ուսումնասիրություն, ինքնուրույն աշխատանքի կատարում, համացանց:</p>
Գնահատման մեթոդները	Ուլտրաձևերի կիրառում, անհատական աշխատանքի ներկայացում, բազմագործոնային համակարգ (100 բալանց սանդղակով):
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն

Կրթական ծրագիրը (անվանումը)	
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Հիդրոլոգիա և հոսքի կանոնավորում
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	4
Դասընթացի անցկացման կիսամյակը	5-րդ
Մուտքային պահանջներ	«Ճարտարագիտական գեղողեզիա», «Հիդրավլիկա»:
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի ուսումնասիրել գետերի ջրային հաշվեկշիռը, ուսանողներին բացատրել ջրապահովածության գաղափարը, ջրամբարի ստեղծման հնարավորությունը տվյալ ներհոսքի պայմաններում:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	<p>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • հավաքագրել հաշվարկային ապահովածության ներհոսքի տվյալներ դրանց հետագա վերլուծության համար, • օգտվել համապատասխան տեխնիկական նորմերից և գրականությունից, • որոշել գետային առավելագույն, նվազագույն և միջին տարեկան ելքերի ապահովածության տոկոսները, • կառուցել ապահովածության կորեր, • սահմանել տվյալ տոկոսի ապահովածության ելքերին համապատասխան հիդրոտեխնիկական կառուցվածքների չափերը՝ ենելով կառուցվածքների անվթար շահագործման պայմաններից, • կազմել համապատասխան ճարտարագիտատեխնիկական նախագծեր, • իրականացնել ջրաչափություն արդի ջրաչափական սարքերի կիրառմամբ:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդներ. Դասախոսություն, գործնական, Էլեկտրոնային հարթակ, լաբորատոր փորձեր, համացանց:

	<p>Ուսումնառության մեթոդներ.</p> <p>ուսումնամեթոդական գրականություն, ինքնուրույն աշխատանք, համացանց:</p>
Գնահատման մեթոդները	Տեսական հարցումներ, ընթացիկ ստուգումներ, անհատական առաջադրանքի և լաբորատոր աշխատանքի հանձնում, միջանկյալ և ամփոփիչ քննություններ:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Հողաշինարարություն
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	6
Դասընթացի անցկացման կիսամյակը	5-րդ
Մուտքային պահանջներ	«Ճարտարագիտական գեոդեզիա», «Բարձրագույն մաթեմատիկա», «Համակարգչային գրաֆիկա», «Գյուղատնտեսության հիմունքներ», «Վիճակագրություն», «Ճարտարագիտական երկրաբանություն»:
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի ուսանողներին փոխանցել այնպիսի տեսական գիտելիքներ հողաշինարարութան վերաբերյալ, որոնց միջոցով նրանք հնարավորություն կունենան իրականացնելու և մասնակցելու հանրապետությունում մշակվող և վարվող հողային քաղաքականությանը, գիտականորեն հիմնավորված մեթոդներով մշակեն հողային ռեսուրսների կազմակերպման, օգտագործման, զարգացման ծրագրեր, ծանոթ լինեն << հողային հարաբերությունների կարգավորման արդի խնդիրներին, հողաշինարարության տեսակներին, սկզբունքներին, կառուցվածքին, <<-ում և արտերկրում հողաշինարարական նախագծերին և նախագծային փաստաթղթերին:

<p>Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)</p>	<p>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> կազմել հողերի օգտագործման հողաշինարարական սխեմա, հողաշինարարական սխեմայի հիման վրա կազմել միջտնտեսային հողաշինարարական նախագիծ, միջտնտեսային հողաշինարարական նախագծի հիման վրա կազմել ներտնտեսային հողաշինարարական նախագիծ:
<p>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</p>	<p>Դասավանդման մեթոդներ.</p> <p>տեսական նյութի բացատրություն, գրույց, լաբորատոր աշխատանքի բացատրություն, քննարկումներ: Առարկան դասավանդվում է ցուցադրական նյութերի, սխեմաների, համակարգչային PowerPoint ծրագրի կիրառմամբ:</p> <p>Ուսումնառության մեթոդներ</p> <p>ռեֆերատների պատրաստում և ներկայացում, ուսումնամեթոդական գրականության օգտագործում, գործնական խնդիրների լուծում, նյութերի պատրաստում և զեկուցում, մասնակցություն քննարկումներին:</p>
<p>Գնահատման մեթոդները</p>	<p>Ռուբրիկների կիրառում, անհատական աշխատանքի ներկայացում, բազմագործոնային համակարգ (100 բալանց սանդղակով):</p>
<p>Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ</p>	
<p>Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)</p>	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
<p>Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)</p>	
<p>Դասընթացի անվանումը</p>	Ճարտարագիտական կոնստրուկցիաներ
<p>Դասընթացի տեսակը</p>	Կամընտրային
<p>Դասավանդման լեզուն</p>	հայերեն
<p>Կրեդիտները (ECTS)</p>	4
<p>Դասընթացի անցկացման կիսամյակը</p>	5-րդ
<p>Մուտքային պահանջներ</p>	«Նյութերի դիմադրություն», «Շինարարական նյութեր» և «Տեսական մեխանիկա»:
<p>Դասընթացի նպատակը</p>	Դասընթացը նպատակ ունի ուսանողներին տալ գիտելիքներ կապված ճարտարագիտական կոնստրուկցիաների,

	<p>հիդրոտեխնիկական կառուցվածքների կառուցման, ինչպես նաև դրանց հաշվարկման ու նախագծման հետ, ուսումնասիրելով ճարտարագիտական կոնստրուկցիաների հիմնական տեսակները, կոնստրուկցիաների, դրանց տարրերի հաշվարկային սխեմաները, մետաղե, երկաթբետոնյա և քարային կոնստրուկցիաների հաշվարկման եղանակները (ըստ թույլատրելի լարումների, քայլայող ճիգերի և սահմանային վիճակների):</p>
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	<p>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • ընտրել ճարտարագիտական կառուցվածքներում օգտագործվող կոնստրուկցիաների անհրաժեշտ ձևերն ու դրանց (ինչպես նաև դրանց առանձին տարրերի) արդյունավետ երկրաչափական մեծությունները, • հիմնավորել ճարտարագիտական կոնստրուկցիաների ձևերի ու երկրաչափական մեծությունների ընտրության նպատակահարմարությունը, • կազմել ճարտարագիտական կոնստրուկցիաների հաշվարկման համար անհրաժեշտ հաշվարկային սխեմաները, • կիրառել ճարտարագիտական կոնստրուկցիաների հաշվարկման ժամանակակից մեթոդները, • գնահատել ճարտարագիտական կոնստրուկցիաներն ըստ ամրության, կոշտության և կայունության, • օգտագործել ճարտարագիտական կոնստրուկցիաների հաշվարկման համար անհրաժեշտ տեխնիկական տեղեկատուներն ու տեղեկագրերը:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	<p>Դասավանդման մեթոդներ.</p> <p>Դասախոսություն, լաբորատոր և ինքնուրույն աշխատանքներ, օգտագործելով դասավանդման դասական ձևերը, ներառելով էլեկտրոնային փոստը, էլեկտրոնային գրականությունը և այլն:</p> <p>Ուսումնառության մեթոդներ.</p> <p>Ուսումնամեթոդական գրականություն, ինքնուրույն աշխատանք, համացանց:</p>
Գնահատման մեթոդները	Գրավոր կամ բանավոր, բազմագործոնային համակարգով (100 բալանց սանդղակով):
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի	

ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Գրունտների մեխանիկա, հիմքեր և հիմնատակեր
Դասընթացի տեսակը	Կամընտրային
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	4
Դասընթացի անցկացման կիսամյակը	5-րդ
Մուտքային պահանջներ	“Շինարարական նյութեր”, “Ճարտարագիտական երկրաբանություն”, “Գյուղատնտեսության հիմունքներ” և “Նյութերի դիմադրություն”:
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի ուսանողներին անհրաժեշտ գիտելիքներ տրամադրել կառուցվածքների հիմքերի ճիշտ նախագծման և կառուցման համար թույլ գրունտային պայմաններում գրունտների մեխանիկայի հիմունքների, հիմնատակերի և հիմքերի հաշվարկման տեսության, կառուցվածքների կառուցատարերի և հիմնատակերի համատեղ աշխատանքի, հիմքերի կառուցման առաջավոր և արտադրական մեթոդների, գրունտների արհեստական խտացման ու ամրացման եղանակների, ցցային հիմքերի տեսակների և դրանց նախագծման ու կառուցման պայմանների վերաբերյալ:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	<p>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> Նկարագրել լեռնային ապարների տեսակները, գրունտների ֆիզիկամեխանիկական հատկությունները, հիմքերի տեսակները և գրունտների արհեստական խտացման եղանակները, Ներկայացնել ժայռային ապարների և գրունտների դասակարգումն և առանձնահատկությունները, գրունտների մեխանիկայի հիմնական օրենքները, լարումների բաշխման օրինաչափությունները գրունտներում, հիմքերի կոնստրուկտիվ տեսակներն ու առանձնահատկությունները և ցցային հիմքերի առանձնահատկությունները, Մեկնաբանել գրունտների ֆիզիկամեխանիկական բնութագրերի առանձնահատկությունները, գրունտների մեխանիկայի հիմնական օրենքների կիրառման շրջանակները, գրունտային միջավայրում լարումների բաշխման օրինաչափությունների առանձնահատկությունները, հիմքերի և

	<p>Դրանց տեսակի ընտրության սկզբունքները և գրունտների արիեստական ամրացման եղանակները,</p> <ul style="list-style-type: none"> սահմանել գրունտների ֆիզիկամեխանիկական հատկությունները բնութագրող հիմնական մեծությունները, գրունտների մեխանիկայի օրենքների հիմնական դրույթները, գրունտներում լարումների բաշխման օրինաչափության առանձնահատկությունները և կառուցվածքի համապատասխան ճիշտ հիմքի և գրունտների ամրացման արդյունավետ եղանակի ընտրության սկզբունքները, լուծել կոնկրետ ճարտարագիտական խնդիրներ գրունտների մեխանիկայի օրենքների հիմնական դրույթների կիրառմամբ, որոշակի բեռնվածքի ազդման դեպքում լարումների բաշխման օրինաչափության բացահայտման և կառուցվածքների հիմքերի տեսակի ու չափերի որոշման վերաբերյալ, ինքնուրույն օգտագործել գրունտների մեխանիկայի հիմնական օրենքները, գրունտներում լարումների բաշխման օրինաչափությունները, հիմքերի տեսակի ու չափերի որոշման դրույթները, օգտվելով համապատասխան մասնագիտական գրականությունից, նորմատիվային փաստաթղթերից և տեղեկատու այլուսակներից:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	<p>Դասավանդման մեթոդներ.</p> <p>Տեսական նյութի բացատրություն, լաբորատոր փորձերի բացատրություն և իրականացում, նախագիծ և բացատրություն:</p> <p>Ուսումնառության մեթոդներ.</p> <p>Ուսումնամեթոդական գրականության օգտագործում, մասնակցություն լաբորատոր փորձերին, նախագծում:</p>
Գնահատման մեթոդները	Գրավոր միջանկյալ և ամփոփիչ քննություններ, դրանց բանավոր ներկայացում:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Հեռազննում
Դասընթացի տեսակը	Կամընտրային
Դասավանդման լեզուն	հայերեն

Կրեդիտները (ECTS)	4
Դասընթացի անցկացման կիսամյակը	5-րդ
Մուտքային պահանջներ	«Ճարտարագիտական երկրաբանություն», «Հողաշխնարարություն»:
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի ձեռք բերել տեսական և գործնական գիտելիքներ հեռահար ուսումնասիրման համակարգերի, օդանկարահանման մեթոդների, արբանյակային պատկերիների դասակարգման, վերծանման, գլոբալ տեղորոշման համակարգերի էության և դրանցով ճարտարագիտական խնդիրների լուծման բովանդակության մասին:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա. <ul style="list-style-type: none"> Կիրառել հեռահարզոնդավորման տեսական հիմունքները հողաշխնարարությունում, Ներկայացնել ArcGIS եւ eCognition ծրագրային ապահովումների հիմնական ֆունկցիաները, Վերլուծել արբանյակային նկարները, Կիրառել արբանյակային նկարները հողաշխնարարական խնդիրներում, Կառուցել արբանյակային նկարների համադրություններ, Ստեղծել քարտեզներ, Կատարել նկարների վերահսկվող և անվերահսկելի դասակարգում ArcGIS եւ ECOGNITION ծրագրային ապահովումների միջոցով:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդներ. Տեսական և գործնական ուսուցում, ինքնուրույն աշխատանքների կատարում, տեսական գիտելիքների ստուգման և գործնական հմտությունների ցուցադրման միջոցով: Ուսումառության մեթոդներ. Ուսումնամեթոդական գրականություն, ինքնուրույն աշխատանք, համացանց:
Գնահատման մեթոդները	Անհատական աշխատանքի ներկայացում, բազմագործոնային համակարգ (100 բալանց սանդղակով):
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն

Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Կիրառական մեխանիկա
Դասընթացի տեսակը	Կամընտրային
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	4
Դասընթացի անցկացման կիսամյակը	5-րդ
Մուտքային պահանջներ	«Համակարգչային գրաֆիկա», «Տեսական մեխանիկա»:
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի ուսումնասիրել մեքենաների և մեխանիզմների կառուցվածքի կազմման սկզբունքները և պարզաբանել մեխանիզմների կառուցվածքային և կինեմատիկական սխեմաների, բանվորական գծագրերի պատկերման կանոնները, ընդհանուր նշանակության մեքենամասերի, հանգույցների հաշվարկի և նախագծման հիմունքները:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	<p>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> Նկարագրել գյուղատնտեսական արտադրության մեքենայացման, հողաբարելավման, հողային և ջրային պաշարների օգտագործման ու հիդրոտեխնիկական կառուցվածքների ոլորտներում կիրառվող մեքենաների ու սարքավորումների տեսակներն ու դրանց սինթեզի չափանիշները, Ներկայացնել մեքենաների և մեխանիզմների կառուցվածքի կազմման սկզբունքները, մեխանիզմների կառուցվածքային և կինեմատիկական սխեմաների, բանվորական գծագրերի պատկերման կանոնները, Լուծել մեխանիզմների սինթեզի և վերլուծության կիրառական խնդիրներ, Օգտագործել տեխնիկական տեղեկատվական գրականություն; Կիրառել մեխանիզմների կառուցվածքային և կինեմատիկական սխեմաների, բանվորական գծագրերի պատկերման կանոնները; Նախագծել մեքենաներ, մեխանիզմներ, ընդհանուր նշանակության հանգույցներ և մեքենամասեր:

<p>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</p>	<p>Դասավանդման մեթոդներ. Դասախոսություն, լաբորատոր պարապմունքներ, տեսական նյութի մատուցում և համապատասխան խնդիրների քննարկում, գրավոր հարցում:</p> <p>Ուսումնառության մեթոդներ. Տեսական նյութի յուրացում, լաբորատոր աշխատանքերի կատարում, ինքնուրույն աշխատանքների պատրաստում:</p>
<p>Գնահատման մեթոդները</p>	<p>Ընթացիկ և վերջնական ստուգումներ, որոնք իրականացվում են հաճախումների և ինքնուրույն աշխատանքների, միջանկյալ և ամփոփիչ քննությունների արդյունքներով: Միջանկյալ և ամփոփիչ քննությունները անցկացվում են թեստային տարրերակով:</p>
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
<p>Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)</p>	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
<p>Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)</p>	
<p>Դասընթացի անվանումը</p>	Գյուղատնտեսական ջրամատակարարում և ջրարբիացում
<p>Դասընթացի տեսակը</p>	Պարտադիր
<p>Դասավանդման լեզուն</p>	հայերեն
<p>Կրեդիտները (ECTS)</p>	4
<p>Դասընթացի անցկացման կիսամյակը</p>	6-րդ
<p>Մուտքային պահանջներ</p>	«Հիդրավլիկա», «Ընդհանուր քիմիա», «Ճարտարագիտական բնապահպանություն»:
<p>Դասընթացի նպատակը</p>	Դասընթացը նպատակ ունի առաջարել գիտելիքների անհրաժեշտ պաշար, ինչը հնարավորություն կտա ուսանողին հետագայում գործնականում հաջողությամբ լուծելու, հատկապես, գյուղական բնակավայրերի և գյուղատնտեսական նշանակության օբյեկտների ջրամատակարարման, ինչպես նաև ջրարբիացման հիմնահարցերը:
<p>Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)</p>	<p>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> գնահատել ջրի որակական հատկանիշները, ներկայացնելով ջրամատակարարման նպատակով ջրի որակի բարելավման ուղղիները,

	<ul style="list-style-type: none"> նկարագրել ջրամատակարարման և ջրարբիացման համակարգերի կառուցվածքները, դրանց հաշվարկման, նախագծման և շահագործման պայմանները, հաշվարկել գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրարբիացման համակարգերի առանձին տարրերը, կազմակերպել ջրամատակարարման համակարգերի ու օբյեկտների շահագործման աշխատանքները, օգտվելով համապատասխան մասնագիտական գրականությունից և նորմատիվներից նախագծել գյուղական բնակավայրերի ջրամատակարարման համակարգեր և ջրարբիացման օբյեկտներ, կազմակերպել ջրամատակարարման ու ջրարբիացման համակարգերի շինարարություն, իրականացնել ջրամատակարարման համակարգերի շահագործում, կիրառելով ժամանակակից և արդյունավետ տեխնոլոգիական միջոցներ:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	<p>Դասավանդման մեթոդներ.</p> <p>Դասախոսության նյութի բանավոր ներկայացում, ցուցադրական նյութի էլեկտրոնային ներկայացում, գործնական աշխատանքների տեսական նյութի բացատրություն:</p> <p>Ուսումնառության մեթոդներ.</p> <p>Էլեկտրոնային հարթակի կիրառում, ուսումնամեթոդական գրականության օգտագործում, ինքնուրույն աշխատանքի կատարում:</p>
Գնահատման մեթոդները	Հանձնարարված ինքնուրույն աշխատանքի գրավոր (էլեկտրոնային) և բանավոր ներկայացում, գիտելիքների միջանկյալ և ամփոփ թեստային ստուգում:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Ջրատնտեսական համակարգերի շահագործում
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	5

Դասընթացի անցկացման կիսամյակը	6-րդ
Մուտքային պահանջներ	«Մելիորացիա և հողերի վերականգնում», «Հիդրոտեխնիկական կառուցվածքներ», «Գյուղատնտեսական ջրամատակարարում և ջրարբիացում», «Պոմպեր և Պ/Կ», «Հողային և ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարում», «Հիդրավլիկա»:
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի ուսանողին տալ գիտելիքներ հիդրոմելիորատիվ համակարգերի ջրատնտեսական շահագործման խնդիրների և արդյունավետության բարձրացման վերաբերյալ, ծանոթացնել շահագործման ոլորտի նորագույն տեխնոլոգիաների ներդրմանը, ուսանողի մոտ ծևավորել գիտելիքներ շահագործման միջոցառումների մասին, որոնք նպաստում են ջրային և հողային պաշարների համալիր և արդյունավետ օգտագործմանը, ծանոթացնել ոռոգման ջրի հաշվառման սկզբունքներին, ջրաչափական սարքերի կիրառմանը, աշխատանքին, ինչպես նաև ջրաչափական աշխատանքների ավտոմատացման սկզբունքներին:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	<p>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> մեկնաբանել ջրատնտեսական համակարգերի շահագործման առանձնահատկությունները, կիրառվող աշխատանքների բովանդակությունը, ջրատնտեսական համակարգերի շահագործման միջազգային փորձը, ներկայացնել հողային և ջրային պաշարների արդյունավետ օգտագործման, հողերի մելիորատիվ վիճակի վերահսկման ուղիները, ջրատնտեսական համակարգերի անխափան և երկարակյաց աշխատանքի սկզբունքները, ջրօգտագործման, ջրաչափության ոլորտում կիրառվող գործընթացներն ու տեխնոլոգիաները, ջրատնտեսական համակարգերի շահագործման ոլորտում կիրառվող իրավական փաստաթղթերը, կազմելու կարգն ու բովանդակությունը, տիրապետել ջրատնտեսական համակարգերի շահագործման ընթացքում կիրավող կառավարման ավտոմատ համակարգերին, մեկնաբանել ջրամելիորատիվ համակարգերի շահագործման առաջավոր մեթոդները, ջրային և հողային օրենսդրության հիմնարար հասկացությունները, ջրօգտագործման գործընթացի, շահագործման արդյունավետ կազմակերպման և կառավարման սխեմաների իրականացման բնագավառներում, կիրառել գործնականում SS համակարգեր՝ տեղեկատվական բազայի ստեղծման, վերլուծության, գնահատման, ջրային և

	<p>հողային հարաբերությունների խնդիրների լուծման նպատակով, ապահովելով աշխատանքի բարձր արդյունավետություն,</p> <ul style="list-style-type: none"> առաջարկել ժամանակակից ջրատնտեսական համակարգերի շահագորման կատարելագործման ուղիներ:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	<p>Դասավանդման մեթոդներ.</p> <p>դասախոսության, գործնական աշխատանքների տեսական նյութի բացատրություն, ցուցադրական նյութի էլեկտրոնային ներկայացում, անհատական հանձնարարականներ, ինքնուրույն աշխատանք, խմբային քննարկում:</p> <p>Ուսումնառության մեթոդներ.</p> <p>Ուսումնամեթոդական գրականության օգտագործում, էլեկտրոնային հարթակի կիրառում, ինքնուրույն և խմբային աշխատանքների կատարում, տիպային օրինակների կիրառում, համացանցում առկա շտեմարանների կիրառում:</p>
Գնահատման մեթոդները	Ռուբրիկների կիրառում, անհատական աշխատանքի ներկայացում, բազմագործոնային համակարգ (100 բալանց սանդղակով):
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Հողային և ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարում
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	4
Դասընթացի անցկացման կիսամյակը	6-րդ
Մուտքային պահանջներ	«Հիդրավիկա», «Հոսքի կանոնավորում», «Հիդրոլոգիա», «Հիդրոտեխնիկական կառուցվածքներ», «Մելիորացիա և հողերի վերականգնում»
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի ուսումնասիրել ջրատնտեսական հաշվեկշիռը, ժող.տնտեսության տարբեր ոլորտների ջրապահովման նպատակով հաշվարկել անհրաժեշտ ջրի ծավալները:

<p>Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունը)</p>	<p>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • Կիրառել ջրային և հողային ռեսուրսների առավել արդյունավետ կառավարման մեթոդ, • հիմնավորել ջրամբարի ստեղծման անհրաժեշտությունը, • կազմել ջրամբարի աշխատանքային գրաֆիկը, • հայտնաբերել ջրամբարի նախագծման արդյունքում ջրածածկ բնակավայրերը, գյուղատնտեսական հողատեսքերը, • կառուցել տեղագրական բնութագրերը:
<p>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</p>	<p>Դասավանդման մեթոդներ. Դասախոսություն, գործնական, Էլեկտրոնային հարթակ, լաբորատոր փորձեր, համացանց:</p> <p>Ուսումնառության մեթոդներ. Կիրառել տեղեկատվական տեխնոլոգիաներ, համացանց, օգտվել ուսումնամեթոդական գրականությունից:</p>
<p>Գնահատման մեթոդները</p>	<p>Տեսական հարցումներ, ընթացիկ ստուգումներ, անհատական առաջադրանքի հանձնում: Միջանկյալ և ամփոփիչ քննություններ:</p>
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
<p>Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)</p>	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
<p>Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)</p>	
<p>Դասընթացի անվանումը</p>	Պոմպեր և պոմպակայաններ
<p>Դասընթացի տեսակը</p>	Պարտադիր
<p>Դասավանդման լեզուն</p>	հայերեն
<p>Կրեդիտները (ECTS)</p>	5
<p>Դասընթացի անցկացման կիսամյակը</p>	6-րդ
<p>Մուտքային պահանջներ</p>	«Հիդրավլիկա», «Մելիորացիա և հողերի վերականգնում», «Ճարտարագիտական բնապահպանություն»:
<p>Դասընթացի նպատակը</p>	Դասընթացը նպատակ ունի ուսանողի մոտ ապահովել գիտելիքների բավարար պաշար տարբեր բնագավառներում կիրառվող ջրամբարձ մեքենաների կառուցվածքի և աշխատանքի

	<p>սկզբունքի վերաբերյալ, ինչպես նաև գարգացնել ունակություններ պոմպային կայանների (հատկապես ոռոգման, ցամաքեցման և ջրամատակարարման) նախագծման, դրանց շինարարության իրականացման և շահագործման աշխատանքների կազմակերպման ուղղությամբ:</p>
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	<p>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • Ներկայացնել ջրամբարձ մեքենաների ու պոմպերի տիպերը, դրանց կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը, հիմնական պարամետրերը, բնութագրերը և կիրառման պայմանները, • Ներկայացնել մեքենայական ջրամբարձով հիդրոհանգույցի սխեմաները, բաղկացուցիչ մասերը և դրանց հաշվարկման ու նախագծման մեթոդները, • Նկարագրել մեքենայական ջրամբարձով հիդրոհանգույցների շահագործման պայմանները, ջրաէներգետիկ ու տեխնիկատնտեսական տեսակարար ցուցանիշները, • օգտվելով համապատասխան մասնագիտական գրականությունից և նորմատիվներից նախագծել պոմպակայաններ ու մեքենայական ջրամբարձով հիդրոտեխնիկական հանգույցների շինարարություն, • կազմակերպել պոմպակայանների ու մեքենայական ջրամբարձով հիդրոտեխնիկական հանգույցների շինարարություն, • իրականացնել ոռոգման, ջրամատակարարման և այլն պոմպակայանների շահագործում, կիրառելով ժամանակակից և արդյունավետ տեխնոլոգիական միջոցներ:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	<p>Դասավանդման մեթոդներ.</p> <p>Դասախոսության նյութի բանավոր ներկայացում, ցուցադրական նյութի էլեկտրոնային ներկայացում, գործնական աշխատանքների տեսական նյութի բացատրություն, խմբային լաբորատոր աշխատանքներ և քննարկում:</p> <p>Ուսումնառության մեթոդներ.</p> <p>Էլեկտրոնային հարթակի կիրառում, ուսումնամեթոդական գրականության օգտագործում, ինքնուրույն խմբային նախագծի կատարում:</p>
Գնահատման մեթոդները	<p>Հանձնարարված խմբային նախագծի գրավոր (էլեկտրոնային) և բանավոր ներկայացում, գիտելիքների միջանկյալ և ամփոփ թեստային ստուգում:</p>
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն

Կրթական ծրագիրը (անվանումը)	
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Անշարժ գույքի կադաստր
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	6
Դասընթացի անցկացման կիսամյակը	6-րդ
Մուտքային պահանջներ	«Հողաշինարարություն», «Ճարտարագիտական գեռդեզիա», «Համակարգչային գրաֆիկա», «Գյուղատնտեսության հիմունքներ»:
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի ուսանողներին սովորեցնել անշարժ գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության հիմնարար սկզբունքները, անշարժ գույքի նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքները կարգավորող օրենքները և այլ իրավական նորմատիվ ակտերի ընդունումն ու դրանց կատարման նկատմամբ վերահսկողությունը, անշարժ գույքի շուկայի վերլուծությունը, զարգացումը և նրա առանձնահատկությունները, անշարժ գույքի կադաստրի վարումը, ինչպես նաև անշարժ գույքին վերաբերվող այլ բնագավառների հետ կապված հարցերը:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	<p>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> սահմանել անշարժ գույքի և անշարժ գույքի կադաստրի վարման հիմնարար սկզբունքները, սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքները, կատարել բազմաբնակարան շենքերի բնակարանների, անհատական բնակելի տների, հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների կադաստրային գնահատում, բացատրել հողամասերի և դրանց վրա ամրակայված անշարժ գույքի պետական հաշվառման, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման իրականացման, պետական գրանցման օբյեկտների և սուբյեկտների, պետական գրանցման խնդիրները և սկզբունքները բացատրել ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և

	<p>ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի, դրանց տնօրինման և օրինականացման գործառույթները,</p> <ul style="list-style-type: none"> համեմատել հարկատեսակները, գույքահարկի հաշվարկման մեթոդաբանությունը, ենելով գնահատվող օբյեկտի առանձնահատկություններից, վերլուծել անշարժ գույքի գնահատման ստանդարտները, շուկայական արժեքը, պետական օբյեկտների և սուբյեկտների պետական գրանցումը:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	<p>Դասավանդման մեթոդներ.</p> <p>Ենթական նյութի բացատրություն՝ ցուցադրական նյութերի, սխեմաների, համակարգչային PowerPoint ծրագրի կիրառմամբ, զրույց, լաբորատոր աշխատանքի բացատրություն, քննարկումներին:</p> <p>Ուսումնառության մեթոդներ.</p> <p>Ռեֆերատների պատրաստում և ներկայացում, ուսումնամեթոդական գրականության օգտագործում, անհատական աշխատանքի ներկայացում, գործնական խնդիրների լուծում, նյութերի պատրաստում և զեկուցում, մասնակցություն քննարկումներին:</p>
Գնահատման մեթոդները	Անհատական աշխատանքի ներկայացում, բազմագործոնային համակարգ (100 բալանց սանդղակով):
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Ֆուտոգրամետրիա
Դասընթացի տեսակը	Կամընտրային
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	4
Դասընթացի անցկացման կիրամյակը	6-րդ
Մուտքային պահանջներ	«Ճարտարագիտական գեոդեզիա», «Հողաշինարարություն», «Բարձրագույն մաթեմատիկա», «Գյուղատնտեսության հիմունքներ», «Ճարտարագիտական երկրաբանություն»:

Դասընթացի նպատակը	<p>Դասընթացը նպատակ ունի ուսանողներին սովորեցնել էլեկտրոնային քարտեզների կազմման աշխատանքները, աերո և ուղեծրային ֆուտոպրամմետրիկ աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև ծանոթացնել աերոթռիչքային աշխատանքներին, նկարների դաշտային լաբորատոր աշխատանքների կազմակերպմանը, պլանային ցանցերի գարգացմանը և կապակցմանը:</p>
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	<p>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> բացատրել ֆուտոտոպրաֆիայի հիմնական հասկացողությունները, աէրոնկարը, հատակագիծը, և դրանց տարրերությունը հայումային աէրոնկարներից, կատարել կենտրոնական պրոյեկցիայի և աէրոնկարների կողմնորոշման տարրերի հաշվարկ, մասշտաբների պատկերում աէրոնկարների վրա, բացատրել նկարահանման բարձրության, երթուղիների և նկարների թվի որոշման խնդիրների լուծման էությունը, աէրոնկարների կետերի պարալաքսների և կոորդինատների հաշվարկը, ցուցադրել կենտրոնական պրոյեկցիայի տարրերը նեգատիվ կամ պոզիտիվ աէրոլուսանկարների վրա, կատարել ֆուտոտոպրաֆիական հանույթ, ելնելով աէրոնկարների որակի, ուղիղ գծի հեռանկարի և կենտրոնական պրոյեկցիայի հիմնական սկզբունքներից, կրկնակի չափումները և արդյունքների մշակումը, մեկնաբանել բարձր ճշտությամբ ֆուտոկամերաներով նկարահանման և դրանց վերծանման աշխատանքների բովանդակությունը, ֆուտոտոպրաֆիական չափումների և հաշվարկների ճշտությունը, շարժվող օբյեկտների օդատիեզերական նկարահանման արդյունքները:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	<p>Դասավանդման մեթոդներ.</p> <p>տեսական նյութի բացատրություն՝ ցուցադրական նյութերի, սխեմաների, համակարգչային PowerPoint ծրագրի կիրառմամբ, գրույց, լաբորատոր աշխատանքի բացատրություն, քննարկումներ:</p> <p>Ուսումնառության մեթոդներ</p> <p>ռեֆերատների պատրաստում և ներկայացում, ուսումնամեթոդական գրականության օգտագործում, անհատական աշխատանքի ներկայացում, գործնական խնդիրների լուծումներ, մասնակցություն քննարկումներին:</p>
Գնահատման մեթոդները	<p>Անհատական աշխատանքի ներկայացում, բազմագործոնային համակարգ (100 բալանց սանդղակով):</p>

Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Հիդրոէներգետիկայի հիմունքներ
Դասընթացի տեսակը	Կամընտրային
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	4
Դասընթացի անցկացման կիսամյակը	6-րդ
Մուտքային պահանջներ	«Հողային և ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարում», «Հիդրոտեխնիկական կառուցվածքներ», «Հիդրոլոգիա և հոսքի կանոնավորում»:
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի ուսումնասիրել տարածաշրջանի էներգետիկ պոտենցիալ հնարավորությունները, ինչպես նաև մշակել տեխնիկական և տնտեսական մեթոդներ տվյալ ռեսուրսը օգտագործելի դարձնելու նպատակով:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա. <ul style="list-style-type: none"> • Ներկայացնել ջրամբարային հիդրոհանգույցում ՀԷԿ-ի շենքի տեսակներն ու դրանց նպատակները, • կազմել էներգահամակարգի բեռնվածության գրաֆիկը, • ընտրել ՀԷԿ-ի հիդրոժամական սարքավորումները, • որոշել դրանց նորմատիվային պարամետրերը, • իրականացնել համալիր հիդրոհանգույցի վերադասավորում համակարգում ՀԷԿ-ի շենքի առկայության պայմաններից ելնելով:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդներ. դասախոսություն, գործնական, էլեկտրոնային հարթակ, լաբորատոր փորձեր, համացանց: Ուսումնառության մեթոդներ. ուսումնամեթոդական գրականություն, ինքնուրույն աշխատանք,

	համացանց:
Գնահատման մեթոդները	Տեսական հարցումներ, ընթացիկ ստուգումներ, անհատական առաջարանքի հանձնում, միջանկյալ քննություն և ամփոփիչ քննություններ: Հիդրոլագիա
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Ճարտարագիտական նախագծերի գեոդեզիական ապահովում
Դասընթացի տեսակը	Կամընտրային
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	4
Դասընթացի անցկացման կիսամյակը	6-րդ
Մուտքային պահանջներ	«Ճարտարագիտական գեոդեզիա», «Հողաշինարարություն», «Հեռազննում», «Ֆուտոգրամմետրիա»:
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի ուսումնասիրել ճարտարագիտական նախագծերի գեոդեզիական ապահովման խնդիրները, կատարել հանույթային աշխատանքներ և սովորեցնել արդի գեոդեզիական գործիքներով նախագծերի մշակման և իրականացման մեթոդները:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	<p>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> Կատարել հողաշինարարական և կադաստրային հատակագծերի և քարտեզների կազման նպատակով իրականացվող հանույթային աշխատանքներ՝ ժամանակակից գեոդեզիական գործիքներով (էլեկտրոնային տախեոմետր, ռովեր, դրոններ), Կազմել հատակագծերը ու քարտեզներ Autocad, Civil 3D ծրագրային ապահովման միջոցներով, Մշակել արբանյակային և դրոններով կատարվող օդալուսանկարահանման արդյունքում ստացված պատկերներ, Ստանալ քարտեզներ ArcGIS, Pix4D և այլ գոյություն ունեցող ծրագրերով:
Դասավանդման և	Դասավանդման մեթոդներ.

ուսումնառության մեթոդները	<p>տեսական նյութի բացատրություն՝ ցուցադրական նյութերի, սխեմաների, համակարգչային PowerPoint ծրագրի կիրառմամբ, զրույց, լաբորատոր աշխատանքի բացատրություն, քննարկումներ:</p> <p>Ուսումնառության մեթոդներ.</p> <p>ռեֆերատների պատրաստում և ներկայացում, ուսումնամեթոդական գրականության օգտագործում, անհատական աշխատանքի ներկայացում, գործնական խնդիրների լուծմանը, նյութերի պատրաստում և զեկուցում, մասնակցություն քննարկումներին:</p>
Գնահատման մեթոդները	Անհատական աշխատանքի ներկայացում, բազմագործոնային համակարգ (100 բալանց սանդղակով):
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Ճշգրիտ գյուղատնտեսություն
Դասընթացի տեսակը	Կամընտրային
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	4
Դասընթացի անցկացման կիսամյակը	6-րդ
Մուտքային պահանջներ	«Գյուղատնտեսության հիմունքներ», «Մելիորացիա և հողերի վերականգնում», «Աշխարհագրական տեղեկատվական համակարգեր», «Հեռազննում»:
